Azg Ազգ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 216(4834)

ISSN: 1829-1651

«Հյուսիս-հարավը» կմիանա Նինոծմինդա-Բաթում ճանապարհին

ՀՀ նախագահը Վրաստանում

Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանին** Վրաստանում առաջինը ընդունեց նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Համատեղ ասուլիսում Հայաստանի նախագահը, ընդգծելով, որ «վերջին 2 տարիներին հայ-վրացական հարաբերությունները դինամիկ զարգանում են, ավելացել է ապրանքաշրջանառությունը», նշել է. «2012-ին շահագործման կհանձնվի «Հյուսիս-հարավ» մայրուղին, որը կմիանա Նինոծմինդա-Բաթում ճանապարհին, ինչը հնարավորություն կտա որակյալ ճանապարհով Պարսից ծոցից Վրաստան բեռներ փոխադրելու»: Նախագահ **Սաակաշվիլին** իր հերթին նշել է. «Մեր միջեւ որեւէ խնդիր չկա: Մեր հարաբերությունները ոչ միայն բարեկամական են, այլեւ ռազմատիկ: Վրաստանի համար շատ կարեւոր է, որ Հայաստանը լինի ուժեղ ու ինքնուրույն երկիր»: Հանդիպման ընթացքում, ինչպես նշել է ՀՀ նախագահը, «քննարկվել են հայ-վրացական համագործակցության գրեթե բոլոր հարցերը, անդրադարձ է կատարվել տարածաշրջանային խնդիրներին եւ այլն»:

Նախագահների հանդիպումից հետո պատվիրակությունների անդամները կնքել են համագործակցության մի շարք պայմանագրեր:

Վրաստանում Հայաստանի նախագահին կիյուրընկալեն նաեւ խորհրդարանի փոխխոսնակ Դավիթ Բախրաձեն, ինչպես նաեւ վրաց պատրիարք Իլյա Երկրորդը: Այսօր արդեն նախագահը հանդիպումներ կունենա Հայ առաքելական եկեղեցու վրաց թեմի առաջնորդ Վազգեն Միրզախանյանի, Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, կմասնակցի հայ-վրացական գործարար համաժողովին: Երեկոյան նախագահը կվերադառնա Երեւան:

Հ. Ա.

«Թող դերսիմցիները ներողություն խնդրեն թուրքական պետությունից, քանզի նրանց պապերը սուր դավաճաններ են»

Ինչպես «**Ազգը**» նշել էր նոյեմբերի 24-ի համարում, Թուրքիայի վարչապետ Էրդողանն իր կուսակիցների առջեւ ունեցած ելույթում անդրադարձել էր 1937-38-ի Դերսիմի իրադարձություններին: Թուրք պատմագրության մեջ որպես ապստամբություն բնութագրվող այդ իրադարձությունները նա որակել էր «Դերսիմի կոտորած» եւ ասել. «Եթե պետք է պետության անունից ներողություն խնդրել, ես կխնդրեմ ու խնդրում եմ»:

Ի դեպ, 2005-ին Դիարբեքիրում Թուրքիայի վարչապետը քրդերին էր դիմել՝ հայտարարելով. «Գիտեմ, որ բազմաթիվ անարդարությունների եք ենթարկվել: Դրա համար ես ներողություն եմ խնդրում մեր քուրդ քաղաքացիներից»: Թեեւ Դերսիմի կոտորածների համար զգաներից, իսկ անարդարությունների համար՝ երկրի քուրդ բնակչությունից վարչապետի ներողություն խնդրելը, այն էլ՝ պետության անունից, բացառիկ է Թուրքիայի պատմության մեջ, սակայն դժվար է կռահել, թե ի՞նչ հետեւանքներ կունենա:

Համենայն դեպս, 2005-ին Թուրքիայում բնակչության մեկ քառորդը կազմող քրդերից վարչապետ Էրդողանի ներողությունն ամենեւին էլ չի բաբելավել նրանց վիճակը, ոչ էլ հանգեցրել է սեփական պատմության հետ Թուրքիայի հանրապետության առերեսմանը: Դա պարզապես Դերսիմի իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության նախապայման է ստեղծել երկրում եւ պատճառ է դարձել, որ հարցը ակտիվ վերարծարծվի:

Դրանով հանդերձ, վարչապետ Էրդողանի ներողության արձագանքները միանշանակ չեն Թուրքիայում: Օրինակ, Էրդողանին բուռն հակազդեցությամբ արձագանքել է «Թուրքական ձախակողմյաններ» հանդեսի հեղինակ Գյոքչե Ֆըրաքը: Նա, ինչպես նոյեմբերի 28-ին վկայել էր CNN-Turk-ը, «Թող դերսիմցիները ներողություն խնդրեն պետությունից» վերնագրով հոդվածում փաստորեն նոր կոտորածի կոչ է արել, գրելով. «Դերսիմցիների պապերը պետության դեմ ապստամբած դավաճաններ են: Զինված էին եւ ըմբոստացել էին, որ հիմնահատակ կործանեն թուրքական պետությունը: Ով դերսիմցիներ, իմացեք, որ ձեր պապերը, ինչպես PKK-ական դավաճաններն են անում, զինված ապստամբություն էին բարձրացրել ընդդեմ պետության, հետեւաբար մեր պետությունն էլ իրավացիորեն զենքով ոչնչացրել է նրանց: Լա՛վ է արել, դեռ ավելին պետք է արած լիներ: Այդ դեպքում արդեն իր պապի անունը հիշատակող հայրենիքի դավաճանի ոչ մի վաստակ մեր երկրում այլեւս չէր լինի: Այն տականքները, որոնք հետեւելով իրենց դավաճան պապերին, կարծում են, որ Դերսիմի չորրորդ ապստամբությունն են բարձրացնում, թող անհոգ լինեն, արժանանալու են իրենց պապերի ճակատագրին»:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Դեկտեմբերին սպասվում է ցուրտ եղանակ

Ինչպես տեղեկացանք ԱԻՆ «Հայիդրոմետ» ծառայության օդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանից**, առաջիկա օրերին հանրապետությունում սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը էապես չի փոխվի: Լեռնային շրջաններում սպասվում է գիշերը 20-23 աստիճան ցուրտ, Արարատյան դաշտում՝ 5-10 աստիճան ցուրտ: Ցերեկային ժամերին լեռնային շրջաններում սպասվում է 5-6 աստիճան ցուրտ, Արարատյան դաշտում՝ 3-4 աստիճան տաքություն:

Երեւանում գիշերը սպասվում է 7-9 աստիճան ցուրտ, ցերեկը՝ 2-4 աստիճան տաքություն: Դեկտեմբերի միջին ամսական ջերմաստիճանը նորմայից ցածր է սպասվում նախորդ տարվա համեմատությամբ:

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունից տեղեկացանք, որ սաստիկ բքի եւ վատ տեսանելիության պատճառով փակվել է Բերդ-Ճամբարակ ճանապարհահատվածը:

Մ. Մ.

Կուսակցությունների ֆինանսական գործունեությանը ներկայացվելու են նոր պահանջներ

Երեկ Ազգային ժողովի արտահերթ նիստում սկսեց քննարկվել «Կուսակցությունների մասին» եւ հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթը, որով, կարելի է ասել, խստացումներ են նախատեսվում կուսակցությունների ֆինանսական գործունեության առումով: Արդեն իսկ ընդդիմության ներկայացուցիչները բուռն քննադատում էին այդ փոփոխությունների մի շարք դրույթներ: Արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանը** երեկ փաթեթը ներկայացրեց, ինչեցին նաեւ պատգամավորների առաջին ելույթները: Այսօր քննարկումը կշարունակվի, «**Ազգն**» էլ կանդրադառնա այդ փոփոխություններին:

Մ. Խ.

Որքան էլ ստուգում են, թոշակի ու նպաստի համակարգում էլի խախտումներ են լինում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Արարատի մարզպետարանում տեղի ունեցավ Վերահսկիչ պալատի խորհրդի արտագնա նիստը, քանի որ օրակարգի 4 հարցերից երկուսը վերաբերում էին Արարատի մարզին: Նիստից հետո ՎՊ նախագահ **Իշխան Զաքարյանը** ներկայացրեց վերահսկողությամբ հայտնաբերված խախտումների ֆինանսական նկարագիրը, որը կրկին միլիոնավոր դրամներով էր թվագրվում:

Արարատի մարզպետարանում ստուգման արդյունքներով՝ քաղաքաշինության ոլորտում 2009-2010 թվականների 415 մլն դրամի շինարարության ծավալից ՎՊ -ն հսկիչ չափագրման է ենթարկել 249 մլն դրամը՝ արձանագրելով 24 մլն 300 հազ. դրամի խախտում: Դրանից 5,1 մլն դրամը ծավալային հավելագրումն է, որը պետք է վերականգնվի պետբյուջե, 17,3 մլն դրամն անորակ աշխատանքն է, որը լրացուցիչ աշխատանքներով պետք է վերականգնվի կամ ապահովվի գումարային վերադարձ բյուջե:1,8 մլն դրամի այլ բնույթի խախտումներ են տեղի ունեցել: Առողջապահության ոլորտում 50 եւ ավելի բաժնեմաս ունեցող ընկերություններում արձանագրվել է 14,5 մլն դրամի խախտում, որը նունպես ենթադրում է վերականգնում պետական բյուջե եւ մի մասով էլ ենթադրում է վերականգնում այդ ընկերությունների հաշվեհամարներին:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը 5,7 մլն դրամ խախտման թիվ է արձանագրել, որը նույնպես վերադարձ է ենթադրում բյուջե: 4,1 մլն դրամի խախտում տարբեր հողատարածքների վարձավճարային հավաքագրելիք գումարներ են:

Առանձին ուսումնասիրման առարկա են եղել հատկապես սոցիալական ծառայությունների գրասենյակները, որոնք նպաստ տվող կառույցներ են: Մասիսի տարածքային սոցիալական ծառայությունում 4,3 մլն դրամի, Արտաշատի տարածքային սոցիալական ծառայության գրասենյակում 5,8 մլն դրամի, Վեդիում 4,1 մլն դրամի, Արարատի սոցծառայության գրասենյակում շուրջ 1 մլն դրամի խախտումներ են հայտնաբերվել:

Տես էջ 8

Քասիեն հստակորեն «սահմանազատեց» հայ-ադրբեջանականը ղարաբաղա-ադրբեջանականից

Հավանաբար հաշվի առնելով, որ Արցախի նախագահ Բակո Սահակյանն այս օրերին արտասահմանյան շրջագայության մեջ է, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոդովը, Ռոբերտ Բրադկեն եւ Բերնար Ֆասիեն, նաեւ վերջինիս փոխարինող Ժակ Ֆորը, Ստեփանակերտում չեղան: Իսկ Հայաստանից Ադրբեջան գնացին Տավուշի մարզի եւ ադրբեջանական Ղազախի շրջանի սահմանն անցնելով: Ըստ «ԱՊԱ» գործակալության, արդեն Ղազախում ֆրանսիացի դեռեւս գործող համանախագահ **Բերնար Ֆասիեն** հայտարարել է. «Մենք մեր այցելության դեռ կեսին ենք հասել: Ինչպես գիտեք, հանդիպումները սկսում ենք մի երկրում, մյուսում ավարտում ենք: Մենք այցելեցինք Հայաստան, հանդիպեցինք նախագահին, ԱԳ եւ պաշտպանության նախարարներին ու այս անգամ Ադրբեջան մտանք ոչ թե Ղարաբաղից, այլ հայ-ադրբեջանական սահմանից: Ուրախությամբ պետք է նշեմ, որ այստեղ լարվածությունն ավելի նվազ է, քան շփման գծում: Ղազախից մենք ուղղաթիռով կմեկնենք Բաքու, որտեղ կհանդիպենք նախագահին, ԱԳ եւ պաշտպանության նախարարներին»:

Երեկոյան արդեն Մինսկի համանախագահ եռյակին, տվյալ պարագայում՝ «քառյակին», Բաքվում ընդունել է նախագահ Ալիեւը: Ֆասիեն ադրբեջանական կողմին եւս ներկայացրել է նոր ֆրանսիացի համանախագահ Ժակ Ֆորին:

Այս ամենում, քանի դեռ համանախագահները Բաքվի հանդիպումներից հետո հայտարարությամբ հանդես չեն եկել, որը կարող է լինել անգամ տարեկան զեկույց, ուշագրավ է Ֆասիեի հստակ սահմանազատումը՝ «հայ-ադրբեջանական սահմանը» «շփման գծից», այսինքն՝ ղարաբաղա-ադրբեջանական սահմանից: Ուշագրավ է այն առումով, որ, փաստորեն, ֆրանսիացի գործող համանախագահի համար հայ-ադրբեջանական սահմանն ամենեւին էլ «շփման գիծ չէ», ինչպես ներկայացնում են ադրբեջանական լրատվամիջոցներն ու պաշտոնյաները՝ ամեն անգամ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը ներկայացնելով որպես «հայ-ադրբեջանական ԼՂ հակամարտություն»:

Հ. Ա.

ԱԶԳ

Ընթացիկ

Ինչո՞ւ է ստում կրոնական գործիչը

Կամ կրոնական գործիչների իրական հայտարարությունը

Շեյխ ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի տեղակալը՝ Կովկասի մահմեդականների վարչությունում, երեկ Երևանից ադրբեջանական «կրոնական ոստիկանության» հետ վերադառնալով Բաքու՝ բավական ուշագրավ հայտարարությամբ հանդես եկավ: Փաշազադեի տեղակալ Սաբիր Հասանլին ասել է. «Պատրիարք Կիրիլը ոստոստանել է Ադրբեջանի դիրքորոշումը ԼՂ հիմնահարցում, սա զգացվում էր Երևանում մեր ունեցած բոլոր հանդիպումների ընթացքում»: Թե ինչը ինչպես է զգում հարգարժան Հասանլին, թողնենք, մենք պարզապես հիշեցնենք. ԼՂ հիմնահարցի առնչությամբ հակամարտ կողմերն ունեն սզբունքային տարբեր դիրքորոշումներ՝ ոչ միայն ԼՂ կարգավիճակը որոշելու առնչությամբ: Ադրբեջանական կողմը, ի տարբերություն հայկական կողմերի, բազմիցս է հայտարարել, որ «պատրաստ է, եւ կարող է ԼՂ հիմնահարցը լուծել ռազմական ճանապարհով», ավելին՝ «որ Բաքվի համբերությունը սպառվում է, ինչը ենթադրում է պատերազմով հետ բերել ադրբեջանական հողերը»: Հատկանշական է, որ այս ու նմանատիպ հայտարարություններ անում է անգամ նախագահ Ալիեւը, հետեւաբար «Ադրբեջանի դիրքորոշումը ԼՂ-ի հարցում» սրանից տարբեր ուղղակի չի կարող լինել: Բացի սրանից՝ երբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունն անձամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բազմիցս, ինչպես նաեւ ողջ շահագրգիռ միջազգային հանրությունը կոչ են արել կողմերին՝ «հետ բերել դիպուկահարներին շփման առաջին գծից», Ադրբեջանում միշտ հայտնվել է որեւէ «արազազիմով» կամ «հասանով», որն ողղակի ասել է հետեւյալը՝ «դիպուկահարներին հետ բերելը հակամարտության լուծում չէ, ինչը կլինի միայն ադրբեջանական հողերի հետ բերելը»: Սա նշանակում է, որ դիպուկահարներին, հետեւաբար նրանց գործողությունները՝ հարեւան երկիրը պահում է զուտ պատերազմական վտանգ ապահովելու համար, ինչը տրամաբանորեն նշանակում է, որ դիպուկահարների գործողության նախահեղինակը հենց Բաքուն է: Սա նույնպես ընկալելի է որպես «Ադրբեջանի դիրքորոշում ԼՂ հիմնահարցում»:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի կրոնական առաջնորդները Երեւանում հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որով մասնավորապես ասվում է. «Մենք հաստատապես կողմնակից ենք առկա խնդիրների լուծմանը բացառապես խաղաղ եւ օրինական միջոցներով...», բացի սրանից՝ «Կոչ ենք անում աջակցել հետխորհրդային ողջ տարածքում ինտեգրման գործընթացներին՝ ուղղված հասարակական բոլոր շերտերին, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին, նաեւ նրանց ազգային ինքնության իրացմանը, դավանանքի ազատությանը եւ կրոնական գործունեության ապահովման ոլորտներում, հնարավորություն ընձեռել նրանց՝ զարգացնելու իրենց լեզուն: Անհրաժեշտ է հոգածություն ցուցաբերել փախստականների եւ վերաբնակեցվածների հանդեպ»: Կոնկրետ ԼՂ հիմանահարցի առնչությամբ կրոնական գործիչները, ինչպես երեկվա համարում նշել ենք, պատմության եւ մշակույթի հուշարձանների ավերմամբ, հայտարարում ենք տարածաշրջանի ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանմանը բոլոր միջոցներով աջակցելու մտադրության մասին»: Հիշեցնենք՝ ԱՊՀ Միջկրոնական համաժողովի երեւանյան աշխատանքների առաջին օրը նախագահ Սերժ Սարգսյանը նույնպես իր ելույթում անհանգստություն հայտնեց մշակութային հուշարձանների, այս դեպքում, իհարկե՝ հայկական հուշարձանների ավերման փաստերի առնչությամբ: Ահա, ուրեմն, թե ինչով են զբաղված եղել կրոնական գործիչները Երեւանում, ավելին՝ Փաշազադեն Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը հայտարարել է, թե ինքն անձամբ նախագահ Ալիեւի հետ հանդիպումներին ընդգծում է «հիմնահարցի ռազմական ճանապարհով լուծելու անհնարինության մասին»:

Իսկ թե ուրիշ էլ ինչ է «զգացել» Սաբիր Հասանլին եւ որքանով է վայել կրոնական գործչի համար ստելը, դա արդեն այն հասարակության խնդիրն է, որը եւ առաջնորդում են Հասանլին ու Փաշազադեն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

«Երազներում Գանձակն եմ տեսնում»

Մեր վերքերը չեն ապաքինվել

1988-ի նոյեմբերի 21-27-ը Գանձակում (Կիրովաբադ) Սումգայիթը կրկնելու փորձ արվեց, սակայն քաղաքում, ուր ապրում էր 45.000 հայ, կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել մեծ թվով զոհերից: Ամեն դեպքում հայերը ստիպված էին լքել իրենց հայրենի քաղաքը, ամեն ինչ թողնել ու հեռանալ: Գանձակի հայերի ինքնապաշտպանությունը ըստ էության ազգային ազատագրական պայքարի եւ Արցախում հայ ժողովրդի մեծ հաղթանակի նախակարապետ դարձավ: Ոչ ամբողջական տվյալների համաձայն՝ 7 օրվա ընթացքում քաղաքում սպանվել է 18 մարդ, վիրավորվել 74-ը, անհայտ կորել 60-ը:

Գանձակի հերոսական ինքնապաշտպանության մասին երեկ խոսեցին ինքնապաշտպանության մասնակից Զուլիետա Երեմյանցը եւ «Ահազանգ» փախստականների հասարակական կազմակերպության նախագահ Գրիշա Օգանեզովը:

«Եվ կոտորեցին, եւ թալանեցին, եւ բռնաբարեցին: Մեր խումբը ստեղծվեց հենց առաջին օրը, 18 հոգի էինք, հետո ավելացանք: 21-ի եւ 22-ի գիշերը մենք արդեն պատրաստ էինք ամեն ինչի, փողոցներով ոչ մի քուրք չէր անցնում: Հարձակումը սկսեցին «Թուրքի չաստ» կոչվող թաղամասից, ուր հայերը քիչ էին ու պաշտպան չունեին: Իսկ «Հայի չաստ» կոչվող թաղամասում ժողովուրդն ավելի համախմբված էր: Կապ հաստատեցինք պարեն Պյոտր Պոլյախի հետ: Պոլյախին միջնորդեցինք թույլտվություն տալ ադրբեջանական թաղամասերից գիշերով հայերին դուրս բերելու համար: Առաջին գիշերը մեզ հաջողվեց դուրս բերել մոտ 70 ընտանիք, որոնց տեղափոխեցինք եկեղեցի», ասաց **Գրիշա Օգանեզովը**:

«Այդ օրերին ձեւավորվեց մեր հասարակական կազմակերպությունը, որ կոչվում էր նախաձեռնողական խումբ: Ինչպես հայտնի է պատմությունից, դժվար պահին մեր ժողովուրդը ապաստան է գտնում եկեղեցում: Նույնը կատարվեց նաեւ նոյեմբերյան օրերին Գանձակում: Ժողովուրդը հավաքվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ զանգերի ձայնով: Այդ օրերին եկեղեցին դարձավ ե՛ւ հիվանդանոց, ե՛ւ ծննդատուն»:

Տիկին **Զուլիետան** հավելեց, որ Հայաստանի բնակչության ու կառավարության հոգեբանական ու նյութական օգնության շնորհիվ է նաեւ, որ քիչ զոհեր եղան: Սակայն նա ցավով է հիշում, որ իրենց ծննդավայրն են թողել, տներն ու հարազատների շիրիմները: «Այսօր Գանձակում այդ շիրիմները չկան, իսկ մեր Սուրբ Հակոբ եկեղեցու դուռը ջարդել են, խաչը հանել ու աղբ են լցնում: Մեզ ամեն անգամ ասում են, թե ամեն տարի գնալով Ծիծեռնակաբերդ ի՞նչ պետք է փոխվի: Իսկ ես ասում եմ, գնում ենք, որովհետեւ հիշում ենք, գնում ենք, որ մեր սերունդները նույնպես հիշեն: Չէ՞ որ եթե մոռանանք, այլեւս չենք կարող պայքարել: Ճիշտ է, Հայաստանը մեր հայրենիքն է, բայց հարազատ ծննդավայրի կարոտը երբեք չես մոռանա: Մինչեւ այսօր երազներում Գանձակն եմ տեսնում:

ԱՆՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՐՅԱԳԱՆՔ

ԲՀԿ-ական պատգամավորի հայտարարությունը

Երեկ հայտարարություն էր տարածել ԲՀԿ պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանը**: Հայտարարության շեշտադրումները հավանաբար արձագանքն են Տեր-Պետրոսյանի՝ ՀԱԿ-ի հանրահավաքում ԲՀԿ-ին ուղղված մեսիջների վերաբերյալ մամուլի բուռն արձագանքին եւ տարբեր ելակետերից արվող վերլուծություններին: Հայտարարության մեջ ասված է. «Կոնգրեսի հանրահավաքում ԲՀԿ-ի վերաբերյալ արված Լեւոն Տեր-Պետրոսյանի վերլուծությունը լուրջ խառնաշփոթ է առաջացրել քաղաքական դաշտում: Որոշ լրատվամիջոցներ անգամ որոշել են Գագիկ Ծառուկյանի թիկնապահների անունը կրկին կապել մարտի 1-ի ողբերգության հետ, դրանով իսկ, թերեւս, փորձելով իրենց պատվիրատուների միջոցով ինչ-որ բան հասկացնել Ծառուկյանին: Ես, որպես ԲՀԿ խմբակցության անդամ, այդ ամենը գնահատում եմ ուղղակի անբարոյականություն: Ես չեմ հասկանում, թե Լեւոն Տեր-Պետրոսյանի, ինչպես ինքը որակեց՝ ընդամենը քաղաքագիտական վերլուծությունն ինչո՞ւ է նման անառողջ աժիոտաժ առաջացրել քաղաքական եւ ոչ քաղաքական շրջանակներում: Ցանկացած որ, ցանկացած քաղաքական գործիչ իրավունք ունի ներկայացնելու իր տեսակետն ու իր մոտեցումները, այդ թվում նաեւ առաջին նախագահը: Ի վերջո, մենք անընդհատ խոսում ենք քաղաքական նոր մշակույթի ձեւավորման անհրաժեշտությունից, հանդուրժողականությունից, Եվրոպաներում հայտարարում ենք, որ անցկացնելու ենք ամենաարդար ընտրությունները եւ հարգելու ենք յուրաքանչյուրի քվեն եւ կարծիքը: Ի՞նչն է խանգարում իրականում անել այդ ամենը, նման աննախադեպ ինկվիզիցիոն գործընթացներ չծավալել եւ վիուկների որս չսկսել: Իսկ ինչ վերաբերում է Գագիկ Ծառուկյանի անունը մարտիմեկյան ողբերգության համատեքստում շահարկելու փորձերին, ապա ես նման շահարկողներին եւ նրանց պատվիրատուներին ուղղակի խորհուրդ եմ տալիս զերծ մնալ նման անբարոյական քայլերից եւ չխաղալ կրակի հետ: Գագիկ Ծառուկյանը փոխանցում է, որ թե՛ ինքը, եւ թե՛ իր կուսակիցները կարեւորում են մարտիմեկյան դեպքերի ողջ իրողությունը բացահայտելը»:

Եվ ապա մամուլի տարբեր, իր խոսքով՝ ստահոդ հայտարարություններին պատասխանելով՝ Ն. Զոհրաբյանը երկու տարի առաջ Գ. Ծառուկյանի գրասենյակի հնչեցրած պաշտոնական հայտարարությունից եւս մեջբերում է արել՝ նորացնելով դա այս պահի համար. «Գագիկ Ծառուկյանի մամուլի գրասենյակը հայտարարում է, որ հրապարակված տեղեկությունները բացարձակապես սուտ են եւ չեն համապատասխանում իրականությանը: Գագիկ Ծառուկյանի մերձավոր շրջապատից որեւէ մեկը որեւէ կերպ մարտի 1-ի դեպքերին ներգրավված չի եղել: Նման կեղծ եւ ստահոդ տեղեկություններ տարածողները փորձում են հասարակության ուշադրությունը շեղել մարտի 1-ի ողբերգական դեպքերի իրական պատասխանատուներից, տարաբնույթ հերյուրանքների միջոցով վարկաբեկել Գագիկ Ծառուկյանի բարի անունն ու պատիվը»:

Մ. Խ.

Գործարարը մեղադրում է սննդի անվտանգության ծառայությանը եւ Աբրամ Բախչագուլյանին

Խմբագրությունը երեկ նամակ է ստացել գործարար Բորիս Սողոմոնյանից, որտեղ նա քննադատել է սննդի անվտանգության ծառայությանը եւ նրա ղեկավար Աբրամ Բախչագուլյանին: Ըստ գործարարի՝ Աբրամ Բախչագուլյանը «նոյեմբերի սկզբին ըստ երեւույթին շինծու գործ է բացել եւ լրատվամիջոցներով վարկաբեկել Հրազդանում գտնվող «Արմֆուդ» փոքր ձեռնարկությանը»: Այդ ժամանակ տեղեկություն տարածվեց, որ այս ընկերության արտադրած կաթում ստաֆիլակոկ, իսկ ապա աղիքային ցուպիկի խումբ էր հայտնաբերվել: Մինչդեռ Բորիս Սողոմոնյանը հավաստիացնում է, որ «մինչեւ օրս Բախչագուլյանի ղեկավարած մարմինը թաքցնում է լաբորատոր հետազոտության ակտը եւ չի պարզաբանել, թե հատկապես ով է այդ կաթից տուժող անձը»:

«Արմֆուդ» ձեռնարկության տնօրեն Բորիս Սողոմոնյանը սեփական արտադրության կաթը թե՛ հում եւ թե՛ պաստերիզացված ու մանրէազերծված վիճակում վերջին շաբաթներին ստուգման է հանձնել 3 տարբեր լաբորատորիաներում, որոնցից երկուսը չեն հայտնաբերել վերոնշյալ մանրէներից ոչ մեկը: Իսկ նշված պետական ծառայության լաբորատորիան առաջին անգամ ոչինչ չի հայտնաբերել, ապա պարզելով, որ հանձնողը Բորիս Սողոմոնյանն է, երկրորդ եւ երրորդ անգամ արձանագրել է մանրէների առկայություն, ինչը մյուս լաբորատորիաները չեն հայտնաբերել», ասված է մեզ տրամադրած հաղորդագրության մեջ:

Ըստ գործարարի՝ այստեղ գործ ունենք պաշտոնի չարաշահման սկանդալային փաստի հետ, որն արդեն իսկ մեծ նյութական վնաս է հասցրել իրեն: Բորիս Սողոմոնյանը պատրաստվում է քայլեր ձեռնարկել պետական մարմնի կամայական ու իրավախախտ գործողությունների դեմ՝ նյութական ահռելի վնասի փոխհատուցման եւ որոշումը չեղյալ հայտարարելու պահանջների մասին:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Խթաններ ջերմամասակարարման եւ արեւային էներգեիկայի համար

Մտահոգություններ՝ էլեկտրաէներգեիկական համակարգի հուսալիության բարձրացման պարտադիր պահանջի վերաբերյալ

«Էներգեիկայի մասին» օրենքում մի շարք փոփոխություններ է նախապատրաստվում իրականացնել Հայաստանի կառավարության առաջիկա նիստում: Ըստ փոփոխություններից մեկի՝ խնայեցվում է, թե ոլորտում գործունեության որ տեսակները կարգավորման ենթակա չեն լինի: Մասնավորապես, այդ դեպքում կարգավորման ենթակա չեն լինի բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրությունից բացի, նաեւ՝ բացառապես սեփական կարիքների համար ջերմաէներգեիկայի ոլորտում նոր արտադրական հզորությունների (ներառյալ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանների) կառուցումը, ջերմային էներգիայի արտադրությունը, փոխադրումը եւ բաշխումը, ջերմաէներգեիկայի ոլորտում նոր արտադրական հզորությունների (բացառությամբ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանների) կառուցումը, ջերմային էներգիայի արտադրությունը, փոխադրումը եւ բաշխումը՝ եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 ՄՎտ-ը, մինչեւ 150 ԿՎտ (ներառյալ) հզորությամբ արեւային էլեկտրակայանների կառուցումը:

Վերոնշյալը նշանակում է, որ խթաններ կստեղծվեն ջերմամասակարարման (հիմնականում կենտրոնացված ջերմամասակարարման) եւ արեւային էներգեիկայի ոլորտների զարգացման համար: Կառավարության եզրակացության մեջ նշված է, որ ներկայումս ջերմամասակարարման եւ արեւային էներգեիկայի ոլորտներում չեն արձանագրվում դրական նշանակալից զարգացումներ: Եթե այս փոփոխության վերաբերյալ ոչ մի գերատեսչությունից առարկություն չի ներկայացվել, ապա մյուս առաջարկության վերաբերյալ էկոնոմիկայի նախարարությունն առարկել է:

Խոսքն այն մասին է, որ էլեկտրաէներգեիկական համակարգի օպերատորը, («Հայաստանի էլեկտրական ցանցերը») յուրաքանչյուր տարվա ավարտից հետո, երկամյա ժամկետում, հանձնաժողովի սահմանած կարգով, հրապարակում է էլեկտրաէներգեիկական համակարգի նախորդ տարվա անվտանգության եւ հուսալիության ցուցանիշները եւ ճշգրտման անհրաժեշտության դեպքում, անվտանգության եւ հուսալիության ցուցանիշների վերանայման մասին առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնին: Այսինքն, հանձնաժողովի համաձայնեցմանը պետք է ներկայացվեն համակարգի հուսալիության բարձրացման ներդրումային ծրագրերը՝ սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ եզրակացություն ստանալու համար:

Էկոնոմիկայի նախարարության կարծիքով, վերոնշյալ գործառույթների իրականացման համար կատարված ծախսերը սակագնի մեջ ներառելը հիմնավորված չէ, ինչը բացասական ազդեցություն կունենա գործարար միջավայրի վրա:

Սակայն էկոնոմիկայի նախարարության այս առարկությունը կառավարության կողմից չի ընդունվել այն հիմնավորմամբ, որ օրենքի այդ փոփոխությունը գործարար միջավայրի վրա ընդհանրապես ազդեցություն չի թողնի, քանի որ խոսքը միայն մեկ կազմակերպության պարտավորությունների մասին է եւ որ այն չի նշանակում սակագնի միանշանակ ավելացում: Մինչդեռ պարտադիր պահանջ է դառնալու էլեկտրաէներգեիկական համակարգի հուսալիության բարձրացման միջոցառումների մշտական իրականացումը, որը մինչ այդ պարտադրված չէր:

Անշուշտ, էկոնոմիկայի նախարարության այն մտահոգությունը, որ դա կարող է սակագնի բարձրացման պատճառ դառնալ, հավանական է: Սակայն, մյուս կողմից, չի կարող «Հայաստանի էլեկտրական ցանցերը» սակագնի բարձրացման առաջարկ ներկայացնել այն պատճառաբանությամբ, որ մինչ այդ համակարգի հուսալիության վրա ծախսեր կամ չէր կատարում, կամ քիչ էր կատարում:

Ա. Մ.

Արտահանման ավելացում արդյունաբերության միջոցով

Թեեւ 90-ականների վերջերից արդյունաբերության առանձին ճյուղերի՝ (ադամանդագործություն, սննդարդյունաբերություն) զարգացման ծրագրեր պետության կողմից իրականացվեցին, բայց արդյունաբերության զարգացման համալիր ծրագիր չկար: Այն ստեղծվեց միայն այս տարի եւ արդեն անցել է քննարկումների որոշակի փուլ: Այս փաստաթուղթը կքննարկվի նաեւ մոտ օրերս սպասվող Հայաստանի հանրապետական կուսակցության տնտեսական սեմինարի ժամանակ, որին մասնակցելու են նաեւ մասնավոր հատվածի ներկայացուցիչները:

«Արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացման ռազմավարությամբ» ընտրվել է արդյունաբերության 11 ճյուղ, որոնք կստանան պետության օժանդակությունը, նպատակ ունենալով դիվերսիֆիկացնել տնտեսության արտահանելի հատվածը: Ընտրված ճյուղերն են՝ կոնյակագործությունը, գինեգործությունը, պահածոների, հյութերի, ջրերի արտադրությունները, ադամանդագործությունը, ոսկերչությունը, ժամացույցների արտադրությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը, դեղարտադրությունը, տեքստիլ արտադրությունը: Վերոնշյալ ճյուղերի ապրանքների արտահանումը 2015-ին ակնկալվում է հասցնել 700-900 մլն դոլար՝ ներկայիս 385 մլն դոլարի փոխարեն:

Առաջին փուլի համար ընտրվել է 3 ճյուղ՝ կոնյակագործություն, դեղարտադրություն եւ ճշգրիտ ճարտարագիտություն: Պետական աջակցությունը կլինի ինչպես ընդհանրական, այնպես էլ ըստ ոլորտային առանձնահատկությունների:

Ճշգրիտ ճարտարագիտությունը օպտիկական, էլեկտրոնային, մեխանիկական եւ մեքենաշինական արտադրանք թողարկող ճյուղն է: Ներկայումս Հայաստանում այս ճյուղի ձեռնարկություններն արտադրում են տարբեր տեսակի չափիչ, սուղող, ջերմակարգավորիչ, օպտիկական, լազերային սարքեր, բժշկական եւ արդյունաբերական նշանակության գերկարծր եւ բարձր ճշգրտության գործիքներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, կապի միջոցներ եւ համակարգեր, աճեցնում բյուրեղներ: Ճշգրիտ ճարտարագիտությունը ներկայացնող ձեռնարկությունների թիվը 60-70-ն է, որտեղ աշխատում են մոտ 4000 մարդ: Այս ձեռնարկությունները թողարկում են 35 մլն դոլարի արտադրանք, որից 17 մլն դոլարն արտահանվում է (2010-ի տվյալներով):

Երկու փուլով՝ մինչեւ 2015-ը եւ մինչեւ 2020-ը, նախատեսվում է իրականացնել ոլորտի զարգացման աջակցության ծրագիրը: Մասնավորապես, մինչեւ 2015-ը նախատեսվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում «Մարս» գործարանի տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու միջոցով, ֆինանսական աջակցություն նորարարական բիզնես նախագծերին, վենչուրային ֆինանսավորում, ներդրումային ծրագրերի եւ արտահանման ֆինանսավորում, կրթական եւ հետազոտական կարողությունների զարգացում, շուկաներ մուտք գործելու աջակցություն:

2015-ին ոլորտի արտահանումը պետք է կազմի 50-95 մլն դոլար, աշխատողների քանակը՝ 5-6 հազար, կատարված ներդրումները՝ 40-85 մլն դոլար: Այդ ժամկետում պետք է ստեղծված լինեն «Մարսի» ազատ տնտեսական գոտին, ճարտարագիտական համալսարանի հիմքի վրա տեխնոպարկը, լաբորատորիաներն ու կրթական կենտրոնները:

Երկրորդ՝ 2015-2020 թթ. փուլում պետության համար արդեն թիրախ է դառնում խոշորագույն անդրազգային կորպորացիաների հետազոտությունների եւ մշակումների կենտրոնների հիմնումը Հայաստանում, հայկական ճարտարագիտական համալսարանի տարածաշրջանային-միջազգային դարձնելը, ճարտարագիտական նոր ուղղություններ խրախուսումը, ոչ ԱՊՀ երկրներ արտահանման խրախուսումը, Հայաստանը որպես ճարտարագիտական երկիր աշխարհին ներկայացնելը եւ այլն: 2020-ին ակնկալվում է ճշգրիտ ճարտարագիտության ճյուղի արտահանումը հասցնել 165-300 մլն դոլարի, աշխատողների քանակը՝ 8-9 հազարի, ներդրումները՝ 155-285 մլն դոլարի: Փաստորեն, ոլորտի արտահանման ծավալներն առաջիկա 9 տարիներին պետք է ավելանան 10-18 անգամ:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Քարելավվել է համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

ԼՂՀ կառավարության հերթական նիստում վարչապետ **Արա Հարությունյանը** գոհունակություն է հայտնել նոյեմբերին կայացած համազգային դրամահավաքի արդյունքների առթիվ՝ նշելով, որ հայ ժողովուրդն իրոք հետաքրքրված է հայրենիքի ճակատագրով եւ իր հնարավորություններով նպաստում է երկրի զորացմանը, ինչը պետք է շարունակական բնույթ կրի:

Նիստի գլխավոր թեման գալիք տարվա բյուջեն էր, որի նախագիծը ներկայացրել է ԼՂՀ փոխվարչապետ, ֆինանսների նախարար **Սպարտակ Թեւոսյանը**: Ըստ զեկուցողի՝ 2012 թվականին եկամուտների գծով նախատեսվում է 65 մլրդ 103 մլն 572,4 հազար դրամ, ծախսերի գծով՝ 70 մլրդ 320 մլն դրամ: Պակասուրդն ըստ այդմ կկազմի 5 մլրդ 216 մլն 427,6 հազար դրամ: Նախորդ տարվանից ավելի շատ միջոցներ են ներդրվելու գյուղատնտեսության, առողջապահության, կրթության, սոցիալական եւ այլ ոլորտներում: Բարձրացվելու են բուժաշխատողների, գյուղատնտեսության մասնագետների, քաղծառայողների աշխատավարձերը, իսկ պետական համակարգի աշխատողների համար կկիրառվի սոցիալական օգնության փաթեթ: Ս. Թեւոսյանի մատուցմամբ՝ գալիք տարվա բյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու, մասնավորապես, աշխատանքի ու տնտեսության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

Վարչապետ Ա. Հարությունյանը նիստի վերջում մեկնաբանություն է տվել պետբյուջեի նախագծի վերաբերյալ: Նրա խոսքով, բյուջեն կազմվել է կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, որն էլ բխում է հանրապետության նախագահի նախընտրական ծրագրից: Առաջիկա տարիների համար նախատեսվում է ՀՆԱ-ի մինչեւ 11 տոկոս աճ, հավատիացրել է վարչապետը՝ հավելելով, որ բարելավվել է համախառն ներքին արդյունքի կառուցվածքը: Ա. Հարությունյանը նշանակալից ձեռքբերում է համարել Արցախում մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի ցուցանիշը ՀՀ նույնանուն տվյալին հավասարվելը: Անդրադառնալով բնակարանային շինարարությանը՝ նա տեղեկացրել է, որ վերանայվելու են բնակարանային վարկավորման ձեւերը՝ բնակչության համար դարձնելով ավելի մատչելի դարձնելով:

Նոր բյուջեով նախատեսված՝ 5,3 տոկոսի չափով ավելացումները գործադիրի ղեկավարը լավ ցուցանիշ է համարել՝ միաժամանակ շեշտելով, որ այն պետք է ծառայի սահմանված նպատակներին: Ճիշտ կառավարման դեպքում կարելի է մի շարք ծախսեր կրճատել ու ավելի խնայողական լինել, հատկանշել է վարչապետը: Նրա գնահատմամբ, 2012-ը տնտեսական առումով ծանր տարի է լինելու, ուստի պետք է խստիվ կերպով ֆինանսական կարգապահություն պահպանել: Այդ կապակցությամբ Ա. Հարությունյանը նաեւ ընդգծել է, որ հիշյալ պահանջադրությունից չպիտի տուժի մասնավոր (գործարար) հատվածը, եւ որ կարգապահության պահանջը չի պարունակում կոնկրետ հանձնարարականներ հարկատուների նկատմամբ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Orange-ը մեկնարկում է համագործակցություն Հայաստանի Ֆրանսիական համալսարան հիմնադրամի հետ

Orange Արմենիան ստորագրեց համագործակցության համաձայնագիր Ֆրանսիական համալսարան հիմնադրամի հետ, որի շրջանակներում համալսարանի ուսանողները կկարողանան մասնագիտական պրակտիկա անցնել Orange-ում, իսկ Orange-ի լավագույն մասնագետները վերապատրաստման դասընթացներ կիրականացնեն ուսանողների համար, ինչպես նաեւ համալսարանին կցուցաբերեն խորհրդատվական աջակցություն:

«Ֆրանսիական համալսարանն արդեն բազմաթիվ տարիների ավանդույթներ ունի Հայաստանում եւ կարողացել է դառնալ երկրի լավագույն համալսարաններից մեկը, իսկ դրա շրջանավարտները՝ փնտրված մասնագետներ: Ուրախ ենք այս նոր մակարդակի համագործակցության համար, որը թույլ կտա ուսանողներին եվրոպական բիզնես միջավայրում կատարել իրենց առաջին աշխատանքային քայլերը, իսկ հետագայում ավելի հեշտությամբ աշխատանք գտնել, ինչու չէ, նաեւ մեր ընկերությունում: Այս համագործակցությունը մեզ թույլ կտա նաեւ բիզնես ոլորտի փորձը կիրառել ակադեմիական կրթությունում», ասաց Orange Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն Բրունո Դյուբուան:

Orange-ը նաեւ համալսարան էր եկել լավ 26 ուսանողների համար լավ լուրով: Ընկերության բարեգործական կառույցի՝ Orange հիմնադրամի միջոցով համալսարանին փոխանցվեց երեք միլիոն դրամ, որը պետք է հատկացվի ուսանողների ուսման վարձի մարմանը: Ուսանողներն ընտրվել են համալսարանների առաջարկով, հիմնվելով երկու հիմնական չափանիշների վրա. ուսանողի ընտանիքի սոցիալական վիճակ եւ առաջադիմություն:

Որոնվում են պատմական Հայաստանում թողած 6 տոննա ոսկու սեփականատերերը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ամեն անգամ, որ կարոտախտով տառապող մի հայ ներկայիս Թուրքիա՝ իր պապերի հայրենիքն է այցելում, նրան անմիջապես շրջապատում են ամենուրեք հանդիպող կամավոր ուղեկցորդներ, որոնք առաջարկում են իրենց ծառայությունները՝ գտնելու այդ երկրում թաքցված հարստությունները: Վերջերս Դիարբեքիր այցելած «Արմինյն Ուիքլի» շաբաթաթերթի աշխատակից Խաչիկ Մուրադյանը, պատմելով այդ ոսկի որոնողների մասին, մեջբերում է Հրանտ Դինքի խոսքերը, որ հնչում էին մոտավորապես այսպես. «Դուք գանձեր եք որոնում գետնի տակ՝ չգիտակցելով, որ իսկական գանձը քայլելն էր այս տարածքների վրա, որ մեզանից խլեցին եւ ոչնչացրին»:

Հիշում եմ, երբ մայրս մի անգամ Ադանա այցելելով գտել էր այն տունը, որտեղ ծնվել էր, նոր տանտերերը, որոնք դեռ սեփականության պաշտոնական թղթերը չէին ձեւակերպել, շռայլորեն հյուրասիրելուց հետո հարցրել էին, թե որտեղ են թաղված նրանց հարստությունները:

Շատ թուրքեր սիրալիր ողջունում են հայ զբոսաշրջիկների այցելությունները: Բայց առավել շատ են նրանք, ովքեր մինչեւ օրս փորձում են նրանց՝ այդ հայրենաբաղձ մարդկանց միջոցով իմանալ թաքցված «գանձերի» վայրերը: Եվ իրականում, երբ հայերը տեղահանվում էին, նրանց մեծ մասը հավատացած էր, որ այդ բոլորը ժամանակավոր միջոցառումներ են, եւ որ դարձյալ վերադառնալու են իրենց քաղաքներն ու տները պատերազմի ավարտից հետո: Այդ իսկ պատճառով նրանք իրենց հարստությունը կամ գաղտնի մի վայրում «թաղում» էին, կամ էլ ի պահ տալիս իրենց հավատարիմ մահմեդականներին, ինչպես Քեմալ Յալչընի գրքերում նկարագրված բազմաթիվ հայեր եւ հույներ:

Վերջերս մի պատմություն է շրջանառվում Շվեյցարիայում 6 տոննա կշռող ոսկեդրամների մասին, որոնք պատմական Հայաստանից Ժնեւի Credit Swisse բանկ են տեղափոխվել, իսկ վերջինս այժմ հրաժարվում է պահանջատեր թուրք մի ընտանիքին վերադարձնել այդ գումարը:

Այս լուրը առաջին անգամ արծարծվել էր թուրքական «Միլլիեթ» թերթի հոկտեմբերի 17-ի համարում, որից հետո մեկնաբանությամբ «Թյուրքիե» թերթում հանդես էր եկել Անկարայի համալսարանի պրոֆեսոր Ջաղրը Էրհանը, որը փոխանակ հարցականի տակ դնելու գումարի սկզբնաղբյուրը, հետաքրքրվել էր, թե ինչ դրդապատճառներով էր Credit Swisse բանկը մերժել ոսկիները հանձնել Էլյազիգի (հայկական պատմական Խարբերդը) շրջանից գործարար Սաիդ Ալի Բայրաքին: Թուրքագետ Հակոբ Ջաֆրյանը Երեւանի «**Ազգ**» օրաթերթում թարգմանել է այդ հոդվածը՝ համեմելով իր մեկնաբանություններով: Թարգմանությունը լույս է տեսել թերթի նոյեմբերի 11-ի համարում: Պարզվում է, որ էլյազիգցի գործարար Սաիդ Ալի Բայրաքը տարիներ շարունակ պայքարում է իր հորից ժառանգած 800 հազար օսմանյան ոսկեդրամները շվեյցարական բանկից սանալու համար: Թուրքիայում Շվեյցարիայի դեսպան Ռայմոնդ Կունցը Էլյազիգ է մեկնել Բայրաքի հետ քննարկելու ոսկեդրամների հարցը, որը պատված է խորհրդավորությամբ: Հարցին միջամտել է նաեւ վարչապետ Էրդողանը: Մի՞թե այս պատմությունը չափից դուրս տարօրինակ չէ: Ինչպե՞ս կարող էր որեւէ մեկը 6 տոննա կշռող 800 հազար օսմանյան ոսկեդրամ փոխադրել Թուրքիայից Շվեյցարիա: Ըստ Բայրաքի՝ հայրն այդ ոսկիները Շվեյցարիա է հասցրել ցամաքային ու ծովային ճանապարհներով: Այսօր այդ 800 հազար օսմանյան ոսկեդրամների արժեքը կազմում է 3,5 միլիարդ դոլար: Դարձյալ ըստ նրա, հայրն այդ գումարը նավով փոխադրել է Շվեյցարիա 1980-ի սեպտեմբերի 12-ի հեղաշրջման նախօրեին, երբ գնդապետ Քենան Էվրենը Թուրքիայում զինվորական բռնատիրություն հաստատեց: Դժվար չէ եզրակացնել այստեղից, որ Բայրաքի հայրը մաս էր կազմում «խորքային պետության», որ սարսափի իշխանություն էր ստեղծել երկրում: Այսօր այդ «խորքային պետության» հանցագործությունները առնչվում են «Էրգենեքոնի» գործունեության հետաքննությանը:

Պրոֆ. Ջաղրը գրում է. «Որքան ինձ հայտնի է, Թուրքիայի Հանրապետության առաջին շրջանում ոչ որ «առձեռն» այդպիսի գումար չի ունեցել: 1924-ին հիմնադրված IS բանկի կապիտալը 250 հազար լիրա էր: Այսինքն խնդրո առարկա գումարը պետությունից գաղտնի տարիներ շարունակ թաքցնելն անգամ ինքնին մեծ խնդիր է»: Ըստ Բայրաքի՝ նրա հայրն այդ գումարը վաստակել է շնորհիվ առեւտրի եւ թաքցրել է «իրենց տան տակ փորած փոսում»:

Առեւտրի միջոցով այդքան ոսկի վաստակելը վիճահարույց հարց է, քանի որ հանրապետության հռչակումից հետո առեւտուրը Թուրքիայում օսմանյան ոսկեդրամով չէր իրականացվում: Բայրաքի հայրը հավանաբար հավատացած է եղել, որ «նացիստական ոսկիների գաղտնիքը պահող շվեյցարական բանկային համակարգը նույն ձեւով կպահի նաեւ իր գումարի գաղտնիությունը», մոռանալով այն փաստը, որ գերմանական ոսկիները հրեաներին էին պատկանում, այլ ոչ թե նացիստներին:

Միլիոնավոր հրեաների ոչնչացնելուց եւ նրանց ունեցվածքին տիրանալուց հետո, նացիստները հատուկ հետաքրքրություն էին ցուցաբերել շվեյցարական բանկերում իրենց զոհերի ներդրած ոսկիների նկատմամբ: 1990-ական թվերին միջազգային սկանդալներ առաջացան այդ ոսկիների առնչությամբ, եւ Շվեյցարիայի կառավարությունը ստիպված էր որոշ գաղտնիքներ բացահայտել Մ. Նահանգների եւ Բրիտանիայի կառավարություններին:

Մինչեւ օրս Հոլոքոստի զոհերի հարցերով զբաղվող բազմաթիվ կազմակերպություններ ընկել են այդ ոսկիների հետեւից: Եթե այդ 800 հազար գումարով ոսկիները շվեյցարական բանկ են դրվել «նացիստական ոսկիների» օրինակով, ապա այդ գումարի աղբյուրն անհայտ լինելու առումով պետք է տեղիք տա լուրջ մտահոգության: Թալեաթ փաշան իր «Գաղտնի թղթածրարում» նշել է, որ Էլյազիգից տեղահանված հայերի թիվը 70 հազար է եղել: Նրանց թվում են եղել նաեւ քաղաքի ունեւոր հայ ընտանիքները: Գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիք, տեղահանությունից հետո վերադառնալու հույսով, փոխանակ ունեցած ոսկին իր հետ վերցնելու, թողել է մահմեդական վստահելի հարեւանի մոտ կամ թաղել ապահով մի տեղ, ինչի մասին տարիներ շարունակ բերնեբերան պատմել են: Ավելին, բազմաթիվ հայեր իրենց պապերի քաղաքներն են այցելում այդ ոսկիները գտնելու նպատակով:

Պրոֆ. Ջաղրը իր մեկնաբանությունները եզրափակում է հետեւյալ տողերով. «2015-ին լրանում է այսպես կոչված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Հայերը կարեւոր նշանակություն են տալիս այդ տարելիցին: Կասկածից վեր է, որ այդ առումով որեւէ առիթ բաց չթողնող հայկական լոբբին արդեն լուսաբաձակի տակ վերցրած պետք է լինի այդ ոսկիները, որոնց աղբյուրն անհայտ է: Credit Swisse բանկն արդեն իսկ «սկանդալային» է որակել գործը եւ հայտարարել, որ «խարդախության հոտ է փչում»: Հետեւաբար չի կարելի վարչապետին խառնել այսպիսի մութ գործերի մեջ, որի ծայրը միչ թե շատ հայտնի է, եւ որը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել ամբողջ երկրի համար»:

Պրոֆեսոր Ջաղրը «հայկական լոբբին» ասելով հավանաբար նկատի ունի այն հայ իրավաբաններին, որոնք հետամուտ լինելով ֆրանսիական եւ գերմանական բանկերում եւ ապահովագրական ընկերություններում ի պահ տրված հայերի ավանդներին, կարողացան հսկայական աշխատանք կատարել եւ զոհերի հետնորդներին վերադարձնել որոշակի գումարներ: Բարեբախտաբար պրոֆեսորը տեղյակ չէ, որ այդ նույն իրավաբաններն այսօր, մի կողմ թողնելով թուրքերին, իրար միս են ուտում՝ մեկը մյուսին դատի տալով:

Ցենք կարող դավադրության կասկածները փարատել, երբ ականատես ենք լինում, թե ինչպես թուրքերի հետեւից ընկնող փասաբաններն այս անգամ իրար դեմ են ճոճում իրենց թրերը:

Ռոնվում են պատմական Հայաստանում թողած 6 տոննա ոսկու սեփականատերերը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Միեւնույն իրավիճակն է Վաշինգտոնի ցեղասպանության թանգարանի բարերարների մոտ, որոնք առատաձեռն նվիրատվություններով գործին լծվելուց հետո, այժմ մեկը մյուսին դատի են տվել՝ հարցականի տակ դնելով թանգարանի պաշտոնական բացման ժամկետը մինչեւ 2015 թվականը:

Մյուս կողմից, Թուրքիայում բազմաթիվ տուժած փոքրամասնություններ դատի են տալիս թուրքական պետությանը: Կառավարությունը խրված է հազարավոր դատական հայցերի հորձանուտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես հեղեղված է նմանօրինակ հայցերով: Անցյալ տարի գրանցվել էր հինգ հազար գործ: Այս տարի այդ թիվը հասել է յոթ հազարի: Եվ Թուրքիան տանուլ է տալիս գրեթե բոլոր այդ դատական գործերը:

Վերջերս Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, միանալով արդարադատության նախարար Սադուլլա Էրգինին, այդ դատական հայցերին նվիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Եվրոպական դատարանում հայցերի այդ քանակը նշանակում է, որ ինչ-որ մի «հիվանդություն» կա Թուրքիայում, որը պետք է «բուժել»: «Թուրքիան պետք է նոր մարտավարություն մշակի՝ կանխելու հայցերի այդ հոսքը: Մենք պետք է փոխենք մեր պաշտպանության մեթոդները, քանի որ չենք շահում եւ ոչ մի դատական գործ», ասել է նա՝ դասակարգելով հայցերը երեք առանձին խմբերի. ա) հայցեր, որոնք առնչվում են Թուրքիայի արտաքին քաղաքականությանը: Անկարայի ագրեսիան եւ Կիպրոսում տարածքների զավթումը առաջ են բերել հսկայական քանակության դատական հայցեր, բ) Թուրքիայի հնացած ներքին օրենքները, որոնք ոտնահարում են քաղաքացիների եւ փոքրամասնությունների իրավունքները, պատճառ են դարձել, որ 19 հազար հայցեր հարուցվեն, գ) հայցեր, որոնք հարուցվել են խոսքի եւ մամուլի ազատությունների սահմանափակման կամ ճնշման հետեւանքով (ինչպես օրինակ՝ ՔՕ-ի 301 հոդվածի առկայությունը):

Աշխարհը դատի է տալիս Թուրքիային եւ շահում է հարուցված հայցերը, մինչդեռ հայ փասաբանները միմյանց հետ են կռվում: Վեց տոննա ոսկի շվեյցարական բանկում «սպասում է», թե ով կյուրացնի «իրեն» եւ օգուտ կտանա:

Այդ գումարը շատ բանով կարող է օգուտ բերել Հայաստանին: Մենք պարտավոր ենք առիթը բաց չթողնել: Ժամանակն է մի կողմ թողնելու երկպառակչական եւ կործանիչ վեճերն ու գնալ... ոսկու հետեւից:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ. Ծ.

ԼՈՒՐԵՐ

«Դատավարություն Ստամբուլում»

Նոր գիրք 2 պրոֆեսորների համահեղինակությամբ

Կանադայի «Զորյան» ինստիտուտից տպագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ լույս է ընծայել մի նոր գիրք օսմանյան կառավարության առաջնորդների հետպատերազմյան դատավարության մասին: Պրոֆեսորներ Վահագն Տատրյանի եւ Թաներ Ակչամի առաջին համատեղ հեղինակությամբ հրատարակված հատորը կոչվում է «Դատավարություն Ստամբուլում: Հայերի ցեղասպանության դատավարությունները», որը ներառում է անզուգական մանրամասներ մարդկության դեմ գործված աննախադեպ ոճրագործության ծրագրման եւ իրականացման վերաբերյալ:

Երկար տարիների համատեղ ուսումնասիրությունների արդյունք հատորը առաջին անգամ անգլերեն լեզվով ներկայացնում է դատավարությունների ամբողջական արձանագրությունները, որոնք պատմականից բացի ներկայացնում են նաեւ իրավական նշանակություն:

«Գիրքը կարեւոր է երկու առումներով: Առաջինը, որ ամբողջապես հիմնված է թուրքական բնագրային փաստագրումների վրա, երկրորդ, որ պատմական մեկնաբանություն չէ, ինչպես այլ գրքեր ցեղասպանության վերաբերյալ, այլ ներառում է բարձրաստիճան օսմանյան պաշտոնյաների երդմամբ հնչեցրած խոստովանություններն այդ ծանրակշիռ ոճրագործության վերաբերյալ», նշել է **Վահագն Տատրյանը** գրքի լույս ընծայման առթիվ:

Իսկ **Թաներ Ակչամն** ավելացրել է. «Մինչ կառավարական պաշտոնական գրառումներն ընդամենը 12 դատավարություն են նշում, մենք 14 տարբեր թերթերից տեղեկություն ենք քաղել, որ իրականում 63 դատավարություն է տեղի ունեցել: Այդ բոլորը ի մի բերելը չափազանց աշխատատար էր»:

«Զորյան» ինստիտուտում այժմ ստեղծվել է «Գիտելիքի համընդհանուր մարմին կամ կենտրոն», որտեղ հավաքվում են բոլոր նյութերը:

Հ. Ծ.

Ոսկե մեդալ պրոֆ. Հակոբ Ակիսկալին

Համաշխարհային ճանաչման արժանացած հայազգի հոգեբան-հոգեբույժ պրոֆ. Հակոբ Ակիսկալին ձեռամբ Լիբանանի առողջապահության նախարար Ալի Հասան Խալիլի հանձնվել է առաջին աստիճանի ոսկե մեդալ առողջապահության բնագավառում մատուցած իր ծառայությունների համար:

Բեյրութի «Ֆենիշյա» հյուրանոցում հոկտեմբերին հոգեբուժության հրատապ հարցերին նվիրված երկօրյա գիտաժողովի բացման օրը նախարարը, մեդալը հանձնելով, ասել է. «Լիբանանի նախագահ Միշել Սլեյմանն անձամբ ցանկացավ, որ այս առիթով մեծարվի պրոֆ. Հակոբ Ակիսկալն իր երկար տարիների վաստակի համար»:

Տեղեկությունը հաղորդել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հ. Ծ.

19 մլն դոլարի մարդասիրական օգնություն

Այս տարվա ինը (հունվար-սեպտեմբեր) ամիսների ընթացքում Հայկական միացյալ հիմնադրամը (ՀՄՄ), ըստ Գլենդեյլից (Կալիֆոռնիա) «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցման, 19 միլիոն դոլարի մարդասիրական օժանդակություն է փոխադրել Հայաստան:

Ընդհանուր առմամբ, 1989-ին իր սկզբնավորման օրվանից, ՀՄՄ-ն 632 միլիոն դոլարի օգնություն է հասցրել Հայաստան 158 օդային եւ 1.942 ծովային բեռնարկղերի միջոցով:

Հ. Ծ.

Արաբական լիգայի խնդիրը Սիրիայի ժողովուրդը չէ, ոչ էլ ժողովրդավարական կարգերը

Այլ՝ ահաբեկչական գործողություններում Սիրիայի «ազաս բանակին» իրախուսելը

Ինչպես «**Ազգը**» տեղեկացրել էր նախորդ համարում, Արաբական լիգան Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դեմ ընդունեց պատժամիջոցների փաթեթ: Սա այս կազմակերպության պատմության մեջ աննախադեպ երեւույթ է, որովհետեւ իր անդամներից որեւէ մեկի նկատմամբ պատժամիջոցի չէր դիմել: Թերեւս պատժամիջոցներին դեմ են եղել Լիբանանն ու Իրանը՝ հրաժարվելով կատարել լիգայի հակասիրիական պահանջները:

Թեեւ Թուրքիան Արաբական լիգայի անդամ չէ, սակայն, ի դեմս փոխվարչապետ Ալի Բաբաջանի եւ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի, ե՛ւ կազմակերպության նիստին է մասնակցել, ե՛ւ պաշտպանում է Սիրիայի դեմ պատժամիջոցների կիրառման որոշումը: Որքան էլ Արաբական լիգան հայտարարի, թե պատժամիջոցներն ուղղված են Ասադի վարչակարգի դեմ, դրանք, լինելով տնտեսական, անդրադառնալու են հենց սիրիական ժողովրդի վրա:

Սակայն Արաբական լիգայի խնդիրը ամենեւին էլ սիրիական ժողովուրդը չէ: Որքան էլ պատժամիջոցների կիրառման որոշումը պայմանավորվի Ասադի վարչակարգի բռնարարքներով, որոշմանը կողմ քվեարկած երկրները Սիրիայում ժողովրդի ազատության կամ ժողովրդավարության հաստատման խնդիր էլ չունեն: Նրանք ոչ էլ ի վիճակի են ունենալու դեպքում նպաստել այս խնդիրների կարգավորմանը:

Ժողովրդի ազատության եւ ժողովրդավարության հասկացությունները միանգամայն խորթ են Սիրիայի դեմ պատժամիջոցների կիրառման որոշում ընդունած երկրներին: Ավելին, այս երկրներից Սաուդյան Արաբիան է աղաստան տալիս համաժողովրդական հեղափոխության հետեւանքով Թունիսում պաշտոնանկ արված Զեյնալ Աբիդին բեն Ալին: Շնորհիվ Սաուդյան Արաբիայի աջակցության, երկրից վտարված Սալեհը վերադարձել է Եմեն, որտեղ չեն դադարում ժողովրդի դեմ հալածանքները ու բռնարարքները: Եթե սաուդյան զորքերը տանկերի ուղեկցությամբ չներխուժեին Բահրեյն հաշվեհարդար տեսնելու համար ցուցարարների հետ, գահընկեց կարվեր Բահրեյնի սուլթանը եւ կտապալվեր նրա բռնատիրական վարչակազմը:

Ինչ վերաբերում է Եգիպտոսին, թեեւ այնտեղ Հոսնի Մուբարաքի իշխանությունը տապալվեց, սակայն իշխանության եկավ Մուբարաքի 30-ամյա բռնատիրության համար պատվարի դեր կատարած բանակը, որը ոչ միայն չի հեռանում, այլեւ ամենաբիրտ միջոցներով ճնշում է երկրում բանակի իշխանության դեմ ընդվզող ժողովրդին: Համենայն դեպս, զինվորական իշխանությունները միայն վերջին մի քանի օրվա ընթացքում 40-ից ավելի ցուցարար են սպանել «Թահրիր» հրապարակում:

Թուրքիան պետական կառուցվածքի առումով, ինչ խոսք, տարբերվում է արաբական երկրներից, սակայն նա էլ մարդու իրավունքների ոտնահարման, խոսքի ազատության, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների հետ երկրի էթնիկ եւ կրոնական խմբավորումների իրավունքների սահմանափակման լուրջ խնդիրների առջեւ է կանգնած: Էլ չենք խոսում երկրում քրդական հարցը քրդերին ճնշելու միջոցով լուծելու դրսեւորումների, PKK-ի հետ տասնյակ տարիների վաղեմություն ունեցող բախումների, սեփական պատմության հետ առերեսման խնդիրների, Կիպրոսի հիմնահարցի եւ սահմանակից Հայաստանին շրջափակելու, ավելին՝ այդ շրջափակումը երրորդ երկրով պայմանավորելու մասին:

Այդ դեպքում ինչո՞վ բացատրել Սիրիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու Արաբական լիգայի որոշումն ու որոշման առնչությամբ այս կազմակերպությանը Թուրքիայի ցուցաբերած աջակցությունը: Ըստ երեւույթին, տարածաշրջանում Սիրիային լիակատար մեկուսացնելու, մեկուսացման պատասխանատվությունը նախագահ Ասադի վրա բարդելու, այսպիսով ժողովրդական զանգվածներին գործող վարչակարգի դեմ հակադրելու նկրտումներով:

Հատկանշական է, որ մինչ Արաբական լիգան Սիրիայի դեմ պատժամիջոցների կիրառման որոշում էր ընդունում, Վաշինգտոնն ու նրա դաշնակիցները էլ նախագահ Ասադի վարչակարգին մեղադրում էին մարդկության դեմ հանցագործություն կատարելու մեջ: Ի դեպ, նախքան Լիբիայի ռմբակոծումը, մարդկության դեմ հանցագործության մեջ մեղադրվել էր նաեւ Մուամմար Քադդաֆին:

Սակայն Սիրիայում այլ իրավիճակ է: Բոլորովին այլ է նաեւ Սիրիայի միջազգային դիրքը: Եթե Ռուսաստանի ու Չինաստանի վետոյի պատճառով Արեւմուտքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ի վիճակի չեղավ Սիրիայի դեմ պատժամիջոցների որոշում ընդունել, առավել եւս չի ընդունի ռազմական միջամտության որոշում: Բայց որ կարելի է նախագահ Ասադի վարչակարգին մարդկության դեմ հանցագործություն կատարելու մեջ մեղադրելով ռազմական մոտալուտ միջամտության պատրանք ստեղծել, ակնհայտ է: Արեւմուտքի ստեղծած այս պատրանքի համադրությունը Արաբական լիգայի պատժամիջոցների հետ ահաբեկչական գործողություններում կխրախուսի Սիրիայի «ազաս բանակին», փոխարենը այս բանակի ահաբեկչությանը հակահարված տալու հարցում միանգամայն կկաշկանդվի մարդկության դեմ հանցագործության մեջ մեղադրվող վարչակարգը:

Այլ կերպ, այն, ինչին Վաշինգտոնն ու նրա դաշնակիցները չեն հասել ՄԱԿ-ի Անվտանգության միջոցով, փորձում են հասնել Արաբական լիգայի պատժամիջոցներով: Դրանք համադրվում են Սիրիայի գործող իշխանություններին հասցեագրված մարդկության դեմ հանցագործություն կատարելու մեղադրանքով, որպեսզի սահմանափակվեն Սիրիայի «ազաս բանակի» դեմ գործելու նախագահ Ասադի հնարավորությունները:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

ԱՄՆ-ում մահացել է Ստալինի դուստր Սվետլանա Ալիլուեւան

Ռիչմոնդ քաղաքում (Վիսկոնսինի նահանգ) 85 տարեկան հասակում մահացել է Իոսիֆ Ստալինի դուստրը՝ Սվետլանա Ալիլուեւան: Նա վախճանվել է նոյեմբերի 22-ին, բայց պաշտոնապես այդ մասին հաղորդվել է երեկ: «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ մահվան պատճառը հաստ աղիքի քաղցկեղն է:

Խորհրդային առաջնորդի դուստրը ծնվել է 1926 թ. փետրվարի 28-ին եւ սկզբում կրում էր հոր ազգանունը, բայց 1953-ին նրա մահից հետո վերցրեց մոր՝ Նադեժդա Ալիլուեւայի ազգանունը: Ավարտել է Մոսկվայի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը եւ ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան: Աշխատել է որպես անգլերենի թարգմանչուհի եւ գրական խմբագիր:

1967-ին նա մեկնել է Հնդկաստան եւ չի վերադարձել հայրենիք: 1970-ին գաղթել է ԱՄՆ:

Այնտեղ նա հրապարակել է լայնորեն հայտնի դարձած «Քսան նամակ բարեկամիս» գիրքը, որտեղ պատմում է իր հոր եւ կրեմլյան կյանքի մասին:

Սվետլանա Ալիլուեւան պաշտոնապես ամուսնացել է 5 անգամ: Առաջին ամուսինը միլիցիոներ Գրիգորի Մորոզովն էր, երկրորդը՝ կրեմլյան ընտրախավի ներկայացուցիչ Յուրի Ժդանովը, երրորդը՝ Զոնռիդ Սվանիձեն, չորրորդը՝ հնդիկ կոմունիստ Ռաջա Բրիջ Սինգը, հինգերորդը՝ ամերիկացի ճարտարապետ Ուիլյամ Պիտերսը:

1982-ին Ալիլուեւան տեղափոխվել է Մեծ Բրիտանիա, իսկ 1984-ին վերադարձել է ԽՍՀՄ եւ հրապարակային հայտարարությամբ դատապարտել արեւմտյան ապրելակերպը, որը թույլ չէր տվել իրեն ազատ զգալ: 1986-ին Միխայիլ Գորբաչովի անձնական թույլտվությամբ կրկին մեկնել է ԱՄՆ:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Ալիլուեւան մի քանի տարի ապրել է բրիտանական ծերանոցում, ինչպես նաեւ ըվեյցարական մենաստանում: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Վիսկոնսինի նահանգում:

Առաջին ամուսնուց նրա ունեցած որդին՝ ուրաբան Իոսիֆ Ալիլուեւը, մահացել է 2008-ին, երբ 63 տարեկան էր:

ԹԵԺ ԿԵՏԵՐ

Սերբերի եւ ՆԱՏՕ-ի ուժերի բախումներ Կոսովոյում

Կոսովոյի հյուսիսում երեկ սերբերի եւ ՆԱՏՕ-ի անվտանգության ուժերի զինծառայողների բախումների հետեւանքով վիրավորվել են ՆԱՏՕ-ի 25 զինվոր եւ 50 խաղաղ բնակիչ: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով սերբական աղբյուրներ: Վիրավոր սերբերին տեղափոխել են մերձակա հիվանդանոց, ՆԱՏՕ-ի զինվորներին՝ իրենց ռազմական:

Զինվորները ռետինե փամփուշտներ եւ ջրանետներ են օգտագործել, մոլեգնած ամբոխինցրելու համար, իսկ ծանր տեխնիկայով փորձել են աղաբրջափակել Զուբին-Պոտոկ քաղաքի մոտ ավտոբուսներով եւ բեռնատարներով փակված մայրուղիները: Գերմանացի եւ ավստրիացի զինծառայողները արտասվաբեր գազ եւ ողողեղային աերոզոլ են կիրառել սերբերի դեմ: Ցուցարարները փորձել են վերականգնել բարիկադները, որոնք փակում են դեպի ՆԱՏՕ-ի ռազմական տանող ճանապարհը:

Սերբերը ՆԱՏՕ-ին մեղադրում են ալբանացիներին օգնելու մեջ, որոնք փորձում են ընդլայնել իրենց ազդեցությունը Կոսովոյի հյուսիսային՝ սերբաբնակ շրջաններում: Սերբերը հանդես են գալիս բաց սահմանների օգտին, քանի որ Կոսովոն համարում են Սերբիայի մասը: Ալբանացիները փորձում են փակել Սերբիայի սահմանը եւ մախային վերահսկողություն հաստատել՝ իբրեւ Կոսովոյի պետականության ստեղծման վկայություն:

ՆԱՏՕ-ի պակիստանյան «սխալի» պատճառը հայտնի է

Շաբաթավերջին Պակիստանի սահմանային պահակակետերից մեկի վրա ՆԱՏՕ-ի ձեռնարկած ուղղաթիռային գրոհի պատճառը եղել է ամերիկյան հատուկ ջոկատի հրամանատարի սխալը: Միջադեպի մանրամասնությունները երեկ հայտնի են դարձել Ասոշիեյթեդ Պրես գործակալությանը:

Պենտագոնի անանուն աղբյուրներ վկայակոչելով՝ գործակալությունը հաղորդում է, որ միջադեպից առաջ Աֆղանստանում՝ Պակիստանի սահմանի մոտակայքում գրոհայինները հարձակվել էին ամերիկյան եւ աֆղանական հատուկ ջոկատների վրա եւ ապա թաքնվել: Երկժամյա որոնումներից հետո ամերիկացիները հայտնաբերել էին պակիստանյան սահմանային պահակակետ: Ջոկատի հրամանատարը սխալմամբ այն ընդունել էր գրոհայինների ճամբարի տեղ եւ դրա ոչնչացման համար օդային պաշտպանություն խնդրել: Ուղղաթիռային գրոհի հետեւանքով սպանվել էր 25 պակիստանցի զինծառայող:

Պակիստանյան պահակակետի ոչնչացումը կտրուկ վատթարացրեց առանց այդ էլ լարված ամերիկա-պակիստանյան հարաբերությունները: Միջադեպից հետո մեկ օրվա ընթացքում Իսլամաբադը փակեց Աֆղանստանում գտնվող ՆԱՏՕ-ի զորքերի մատակարարման միջանցիկ ուղին եւ ԱՄՆ-ից պահանջեց 15 օրում ազատել «Շամսի» ավիաբազան (երեկ «**Ազգը**» գրեց այդ մասին): Պակիստանի վարչապետ Յուսուֆ Ռզան միջադեպը բնութագրեց որպես երկրի «ինքնիշխանության խախտում»: ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները «ափսոսանք» արտահայտեցին ավիահարվածի կապակցությամբ:

ՄԱԿ-ը դատապարտեց Սիրիային

Ընդդիմության զանգվածային ելույթների ճնշման ժամանակ Սիրիայի իշխանությունների ձեռնարկած քայլերը պետք է որակել իբրեւ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն: Սա է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հատուկ քննչական հանձնաժողովի պատրաստած հաշվետվության գլխավոր հետեւությունը:

ՄԱԿ-ի 3-հոգանոց հանձնաժողովը կազմվել է 2011-ի օգոստոսին: Անցած ամիսներին հավաքվել են 223 վկաների ցուցմունքներ: «Իշխանությունները դիմել են սպանությունների, կտանջների, բռնաբարությունների եւ սեռական ծաղրուծանակի այլ ձեւերի», հայտարարել է հանձնաժողովի ղեկավար, բրազիլացի իրավագետ Պաուլո Պինեյրոն:

Հաշվետվության մեջ ընդգծվում է, որ իշխանությունները բռնարարքների դիմելիս խտրություն չեն դրել չափահասների եւ երեխաների միջեւ: Հուզումների ամիսներին սպանվել է 256 երեխա, այդ թվում՝ երկամյա մի աղջնակ:

«Փաստերի եւ տեղեկությունների հիման վրա հանձնաժողովը եզրակացրեց, որ Սիրիայի անվտանգության ուժերը եւ զինվորականները կատարել են մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն, բռնարարքներ գործելով խաղաղ ցույցերի ճնշման ժամանակ», արձանագրում է հաշվետվությունը:

Գարնանը սկսված ապստամբության ամիսներին սպանվել է գրեթե 4 հազար մարդ: Փաստաթղթի հեղինակները նշում են, որ անզեն ցուցարարների վրա կրակելու եւ խոշտանգումներ կիրառելու հրամաններն արձակել է Սիրիայի քաղաքական եւ զինվորական բարձրագույն ղեկավարությունը:

Երեւանի Աղրանֆա-Հումֆային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ օգտագործված, շահագործումից հանված Ավտոմատ Հեռախոսակայանների (ATC) եւ դրանց բաղկացուցիչ մասերի, ինչպես նաեւ սարքավորումների, ավտոմեքենաների, միկրոսխեմաների, ռելեների, կանգնակների եւ աղրանքային այլ բազմաթիվ արժեքների աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 – 17.00, ք. Երեւան Ազաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

Լույս տեսավ երիտասարդ գրողների գրական տարեգրքի 1-ին հատորը

Երեկ կայացավ «Մուգ կապույտ-վառ կարմիր» գրական տարեգրքի անդրանիկ հատորի շնորհանդեսը: Այն բացեց ու տարեգրքի կազմման շուրջը խոսեց բանաստեղծ **Ռազմիկ Դավոյանը**: Վերջապես ընթերցողների դատին հանձնվեց մինչեւ 35 տարեկան երիտասարդ ստեղծագործող հեղինակների բանաստեղծությունների եւ արձակ գործերի ժողովածու: Իսկ թե ինչպես մտահղացավ նման գաղափարը, **«Ազգի»** հարցին պրն Դավոյանն ասաց. «Երիտասարդ գրողների առջեւ պարտավորված զգալու իմ վիճակը անընդհատ սպասողական էր եւ ուզում էի ներկայանար մի առիթ, որով ես իմ պարտքի մի մասը մարեի»: Իրանահայ հայտնի մտավորական, ճարտարագետ, բանաստեղծ Հարփիկ Թամրազյանի քույրերը որոշում են իրենց վաղամեռիկ եղբոր հիշատակին հրատարակել հատկապես երիտասարդ գրողների գործերի ժողովածու: Առաջարկը սիրով ընդունել է պրն Դավոյանը եւ հանրապետության մարզերից փնտրել ու գտել է երիտասարդ 12 գրողների: Այդ հարցում նրան օգնել է «TV ալիք» շաբաթաթերթի գլխ. խմբագիր Սերգեյ Հարությունյանը իր շաբաթաթերթի «Շավիղ» պատանեկան էջի սաներին ներկայացնելով: «Այսօր ինձ համար չափազանց ուրախ եւ երջանիկ օր է, ասաց պրն Դավթյանը, որովհետեւ կարողացա հայոց լեռնաշխարհից պեղել ու քաղել այն կարեւոր «ծաղիկները», զետեղել ժողովածուում եւ իմ մեջ հույս է արթնացել, որ վաղը դա կդառնա հրաշալի պարտեզ՝ իրենց մարդկային պարզ ու անաղարտ նկարագրով, նաեւ մոռացված գյուղի թեմաներով գրականություն ստեղծելու ցանկությամբ: Այս հեղինակները մի խումբ են, որոնք իրական ազնիվ գրականության շարունակողներն են»:

Տարեգիրքը հետագայում կունենա 2-րդ հատորը եւ գրական գործեր կարող են ներկայացնել տարեգրքի կազմող Ռազմիկ Դավոյանին: Նման տարեգիրքը վաղամեռիկ բանաստեղծ Հարփիկ Թամրազյանի հիշատակին հրաշալի հուշարձան է: Մեր օրերում շատ երիտասարդ գրողներ հետեւում են գռեհկաբանության, կամ ստեղծում գործեր, որոնք աղակողմնորոշում են գրական լսարանին: Ահա այս ժողովածուով երիտասարդ գրողները՝ Կարինե Պետրոսյան, Դավիթ Ասատրյան, Հասմիկ Սիմոնյան, Գոռ Հարությունյան, Գոռ Արզումանյան, Անուշ Ասլիբեկյան, Սարգիս Հովսեփյան, Սեւակ Գեւորգյան, Անի Մաղաքյան, Անի Արշակյան, Էլֆիք Զոհրաբյան եւ վաղամեռիկ Հարփիկ Թամրազյան, իրենց բարոյական նկարագիրը պահպանելով, վեր են հանում մեր օրերի ցավն ու իրավիճակը:

Երիտասարդ գրողները ներկաներին հրամցրին իրենց ստեղծագործություններից պատառիկներ եւ արժանացան բուռն ծափերի:

ՄԱԲԵՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Նա նոր ասիճան է երաժշտական արվեստում...

Դեկտեմբերի 11-ին «Հայկական ջազ 70»-ի «Մալխաս ջազ ակումբը»-ի եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում տեղի կունենա բրազիլացի դաշնակահար եւ վոկալիստ, բրազիլական ջազի թագուհի Տանյա Մարիայի համերգը:

Տանյա Մարիան ծնվել է 1948թ. մայիսի 9-ին՝ Բրազիլիայում եւ նրա իրական անունն է Մարիա Ռեյիշ: Մանուկ հասակից հետաքրքրվել է երաժշտությամբ, զբաղվել հատկապես դասական երաժշտությամբ: Մարիայի հայրն է առաջին անգամ նրա համար խումբ հավաքել, որը տաղանդավոր դաշնակահար-կոմպոզիտոր էր եւ հենց նա է Մարիային ծանոթացրել ջազի, սամբայի եւ էթնիկ երաժշտության նրբություններ հետ: Ջազային ասպարեզում նրա կուռքերն են Օսկար Պիտերսոնը, Նեթ Քինգ Քոլը, Բիլ Էվանսը, Սառա Բոուենը եւ Անտոնիո Կարլոսը Ջոմբը:

Նա աշխատել է աշխարհում հայտնի խմբերի եւ կատարողների հետ՝ Սթիվ Գէդ, Էնթոնի Ջեֆսոն, Սեմմի Ֆիգեիրո: Երբ նա նվագում էր Ռիոյի եւ Սան-Պաուլոյի ջազ ակումբներում, այդ ժամանակ նրա ձայնը հաճախ էր լսվում տեղի ռադիոյով:

Տանյա Մարիան ձայնագրել է մի շարք ձայնասկավառակներ՝ «Olha Quem Chega» (1971), «Come With Me» (1983), «Bela Vista» (1990), «Bluesilian» (1996), «Europe» (1997), «No Comments» (1997), «Viva Brazil» (1999): Նա հայտնի դարձավ 80-ական թվականներին՝ Եվրոպական հյուրախաղերից, հատկապես ԱՄՆ-ում Էդի Գոմեզի հետ ելույթից հետո:

Ամերիկացի հայտնի կիթառահար Չարլի Բերդը Տանյայի կատարումների մասին ասել է. «Նա նոր ասիճան է երաժշտական արվեստում...»:

Տանյա Մարիան մասնակցել է ջազային բազմաթիվ փառատոներ, ռադիոհեռուստաշոուների եւ եղել է առաջադրված «Գրեմմի» մրցանակաբաշխությանը՝ «կանացի ջազային վոկալ» անվանակարգում:

Նա ժամանակակից ջազային աշխարհում ստեղծել է իմպրովիզացիոն ուրույն ոճ, որը խորը հուզական եւ միեւնույն ժամանակ շատ թեթեւ է ու տպավորիչ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀՀ, ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում 16.12.2011թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Ջարգացման Հայկական Բանկ ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Բնակարան, որի մակերեսն է՝ 96.95 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ,Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 41 շենք, թիվ 11 բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պատշոնաստար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 300000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 14.12.2011թ. ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, այնուհետեւ հոլանդական՝ մեկնարկային գնի նվազեցմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է պետրագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է պետրագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը, ինչպես նաեւ հատուցել աճուրդին մասնակցելու հետեւանքով նրա կրած վնասները: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 13.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 15:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

ՄՐՑՈՒՅԹ

Ամանորի հանրապետական փառատոնին փայլեց արեւմտահայ պոեզիան

Արագածոտնի մարզ

Արեւմտահայ պոեզիային նվիրված «Հանրապետական մանկապատանեկան ասմունքի փառատոնը» շարունակվեց Արագածոտնի, Տավուշի, Կոտայքի եւ Վայոց ձորի մարզերում: Արագածոտնի մարզի Կարբիի Վահան Թեքեյանի անունը կրող կրթօջախում փառատոնի ժյուրիին, ԱԺ պատգամավոր Տաճատ Վարդապետյանի գլխավորությամբ, դիմավորեցին կրթօջախի տնօրեն Արսեն Օհանյանը, գյուղապետ Ֆրունզիկ Նազարեթյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պատասխանատու Պարգեւ Համբարձումյանը, ուսուցչական կոլեկտիվը: Արսեն Օհանյանը բարձր գնահատեց ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանավորությամբ եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարության աջակցությամբ չորրորդ անգամ անցկացվող փառատոնը, որը հայ պոեզիան մատաղ սերնդին ներկայացնելու, ծանոթացնելու եւ ասմունքելու հնարավորություն է տալիս: Արագածոտնի մարզի եզրափակիչ փուլը ազդարարեց բացված Կարբիի սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Եփրեմ քահանա Զարգարյանի օրհնությամբ եւ կրթօջախի քառաձայն երգչախմբի հրաշալի շնորհավորեց բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը եւ հորդորեց լավ պատրաստվել եզրափակիչին:

Տավուշի մարզ

Տավուշի մարզպետարանի դահլիճում կայացավ փառատոնի մարզի եզրափակիչ փուլը: Մարզի 81 դպրոցներից 1-ին փուլին մասնակցած 15.400 աշակերտներից 45-ը դուրս էր եկել եզրափակիչ, որոնցից 6-ը ճանաչվեցին հաղթող եւ կմրցեն հանրապետական եզրափակիչում: Փառատոնի մասնակիցներին, կազմակերպիչներին եւ հովանավորներին հաջողություններ մաղթեց ու արեւմտահայ պոեզիային հատուկ անդրադառնալու համար շնորհակալություն հայտնեց մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պատասխանատու Աշոտ Փաշինյանը: Ժյուրիի անաչառ աշխատանքը բարձր գնահատեց եւ փառատոների անցկացման գաղափարը ողջունեց մարզպետ Արմեն Ղուլարյանը: Մասնակիցներին ողջունեց ՀՀ ժողովրդական արտիստ, Հ. Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնի դերասան, բեմադրիչ Գուժ Մանուկյանը: Դերասաններ Ջուլիետա Բաբայանը, Սեմ Սարգսյանը եւ Սարգիս Նաջարյանը ներկայացրին արեւմտահայ պոեզիայի գոհարներից: Փառատոնի մարզային եզրափակիչ փուլը փակվեց աշակերտուհի Աիդա Հովսեփյանի ասմունքով:

Վայոց ձորի մարզ

Վայոց ձորի մարզի, Եղեգնաձորի մշակույթի պալատում կայացավ փառատոնի մարզային եզրափակիչ փուլը: Մասնակիցներին եւ ժյուրիին ողջունեց մարզպետ Սերգեյ Բագրատյանը նշելով, որ մատաղ սերնդի հոգեւոր դաստիարակության, ազգային արժեքները հավուր պատշաճի գնահատելու գործում մեծ նշանակություն ու կարեւորություն ունի նման փառատոների անցկացումը: Մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը տեղեկացրեց, որ մարզային 1-ին փուլին Վայքի եւ Եղեգնաձորի տարածաշրջանի 51 դպրոցների 7.333 աշակերտներից 2-րդ եզրափակիչ են դուրս եկել 36-ը՝ երկու տարիքային խմբերից: Ավարտին պարզ դարձավ, որ 36 ասմունքողներից լավագույն 6-ը կմրցի հանրապետական եզրափակիչ փուլին: Մարզային եզրափակիչ փուլի հաղթողներին մարզպետ Բագրատյանը, փառատոնի նախագծի հեղինակ եւ պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանի հետ հանձնեցին նվերներ ու մաղթեցին հաջողություն առաջիկա կարեւոր մրցույթին: Վայոց ձորի մարզը ջերմորեն ընդունեց ՀՀ ժող. արտիստ Գուժ Մանուկյանի, Սարգիս Նաջարյանի, Բորիս Պեղանյանի, Սամվել Բաղինյանի եւ փառատոնի բանախոս, բան. գիտ. թեկնածու Կարո Վարդանյանի ելույթներն ու ասմունքը:

Մարզային փուլերն ավարտվեցին, առջեւում է Երեւանի եզրափակիչը:

ՄԱԲԵՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Գեղարքունիքի մարզ

Կարբիից փառատոնի ժյուրին ոգեւորված ու հիացած արեւմտահայ պոեզիան հրաշալի ներկայացնելուց, հաջորդ օրը հյուրընկալվեց Գեղարքունիքի մարզում: Մարտունի քաղաքի թիվ 3 միջ. դպրոցում ժյուրիին սպասում էին 1-ին փուլի մարզի 126 դպրոցներից 1300 աշակերտներից եզրափակիչ դուրս եկած 37 ասմունքողներ: Սակայն այս մարզում արեւմտահայ պոեզիան յուրացնելը այնքան էլ դյուրին չէր եղել մասնակիցների համար: Մասնակիցներից 6-ին առիթ տրվեց մրցելու եզրափակիչ փուլին: Իսկ ընդմիջմանը ժյուրիի անդամներ ՀՀ վաստ. արտիստ Բորիս Պեղանյանը եւ Ջուլիետա Բաբայանը արեւմտահայերենով հատվածներ ներկայացրեցին մի քանի ներկայացումներից: Բորիս Պեղանյանը առիթը բաց չթողնելով դասախոսեց, թե ինչպես պետք է ասմունքել եւ ինչ ասել է պոեզիայի ճիշտ ընկալում: Հաղթողներին կատարումներով (խմբավար՝ Մարիետա Մկրտչյան): Մարզի 121 դպրոցներից 1-ին փուլին մասնակցել էին 17.681 աշակերտ, որոնցից 38-ը մասնակցեց եզրափակիչին, 7-ին հնարավորություն տրվեց մրցելու հանրապետական եզրափակիչ փուլին: Հաղթողների թվում էին նաեւ թեքեյանցիները:

Մինչ ժյուրին կամփոփեր ասմունքողների արդյունքները, լեփ-լեցուն դահլիճը ծափերով ողջունեց Ջիվանու եւ Սայաթ-Նովայի երգերի հայտնի կատարող Լեւոն Խաչիրյանի երգերը, դերասանուհի Ջուլիետա Բաբայանի եւ ՀՀ վաստ. արտիստ Սարգիս Նաջարյանի ասմունքը:

Մարզային փուլերն ավարտվեցին, առջեւում է Երեւանի եզրափակիչը:

ՄԱԲԵՏ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ հավաքականն ընտրական մրցաշարը կսկսի Մալթայում

Հաստատվեց 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի խաղացանկը

Ֆուտբոլի 2014-ի աշխարհի առաջնության ընտրական 2-րդ խմբի խաղացանկը կազմելու նպատակով Հայաստանի, Իտալիայի, Չեխիայի, Դանիայի, Բուլղարիայի եւ Մալթայի պատվիրակությունները հավաքվել էին Պրահայում: Երկարատեւ քննարկումներից հետո հաստատվեց ընտրական 2-րդ խմբի խաղացանկը:

Հայաստանի հավաքականը 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարը կսկսի 2012-ի սեպտեմբերի 7-ին Մալթայի հավաքականի հետ արտագնա հանդիպումով: 4 օր անց մեր ֆուտբոլիստները կհյուրընկալվեն Բուլղարիայի ընտրանուն: Հայաստանի հավաքականին հայ երկրպագուները Երեւանում կտեսնեն հոկտեմբերի 12-ին: Այդ օրը «Հանրապետական» մարզադաշտում մեր ընտրանին կմրցի ընտրական 2-րդ խումբը գլխավորող աշխարհի նախկին չեմպիոն Իտալիայի հավաքականին: Դա կլինի երկու երկրների հավաքականների անդրանիկ հանդիպումը: Այդ մրցախաղով Հայաստանի հավաքականը կավարտի մրցաշրջան-2012-ը: Եթե հաշվի առնենք, որ հաջորդ մրցաշրջանի համար Հայաստանի հավաքականը նախատեսում է ընկերական 4 հանդիպում, ապա ստացվում է, որ 2012-ին մեր ընտրանին ընդամենը 7 խաղ է անցկացնելու:

2013-ին Հայաստանի հավաքականը ելույթները կշարունակի մարտի 26-ին: Այդ օրը մեր ֆուտբոլիստները Երեւանում կմրցեն չեխերի հետ: Հաջորդ ընտրական մրցախաղը եւս կկայանա սեփական հարկի տակ: Հունիսի 7-ին հայ ֆուտբոլիստները կհյուրընկալեն Մալթայի հավաքականին: 4 օր անց մեր ֆուտբոլիստները Դանիայում կմրցեն տանտերերի հետ:

Ընտրական հաջորդ հանդիպումները կկայանան սեպտեմբերին: 2013-ի սեպտեմբերի 6-ին մեր հավաքականը կհյուրընկալվի չեխերին, 4 օր անց Երեւանում կմրցի դանիացիների հետ: Հոկտեմբերի 11-ին հայ ֆուտբոլիստները սեփական հարկի տակ ուժերը կչափեն Բուլղարիայի հավաքականի հետ: Ընտրական մրցաշարը մեր ընտրանին կեզրափակի հոկտեմբերի 15-ին Իտալիայում:

Ուսումնասիրելով հաստատված խաղացանկը, կարելի է փաստել, որ այն բարենպաստ է Հայաստանի հավաքականի համար: Ընտրական մրցաշարերում շատ կարեւոր է հաջող մեկնարկը, ինչը նոր լիցք ու ոգեւորություն կհաղորդի ֆուտբոլիստներին: Այս առումով Մալթայի հավաքականի հետ խաղով մեկնարկելը շատ հարմար է մեր ֆուտբոլիստների համար: Այդ խաղում մենք անպայման պետք է հաղթանակ ակնկալենք: Մալթայի հավաքականի հետ նախկինում անցկացրած 3 խաղերում էլ ՀՀ հավաքականը հաղթել է: Մալթայի խաղից հետո մերոնք ուղեւորվելու են Բուլղարիա, որտեղ եւս դրական արդյունք ակնկալելն իրատեսական է: Մի խոսքով, հաշվի առնելով ՀՀ հավաքականի հաջող մրցելույթները Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում, հուսով ենք, որ 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցախաղերում էլ մեր ֆուտբոլիստներն աչքի կընկնեն արդյունավետ խաղով:

Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ Նիոնում կայացավ 2012-2013-ի Եվրոպայի պատանեկան առաջնության մինչեւ 17 եւ մինչեւ 19 տարեկանների ընտրական մրցաշարի որակավորման առաջին փուլի, ինչպես նաեւ մինչեւ 19 տարեկանների Եվրոպայի ընթացիկ առաջնության էլիտար փուլի մասնակիցների վիճակահանությունը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի որակավորման փուլում, որի հանդիպումներն անցկացվեցին Երեւանում, հաջող էր հանդես եկել ու հաջորդ փուլի ուղեգիր էր նվաճել: Եվ ահա վիճակահանությամբ Վարազդատ Ավետիսյանի սաներին բավականին ուժեղ մրցակիցներ են բաժին հասել: Մեր հավաքականն ընդգրկվել է ընտրական 7-րդ խմբում, որտեղ հանդես են գալու նաեւ Եվրոպայի մինչեւ 19 տարեկանների գործող չեմպիոն Իսպանիայի, Բելգիայի եւ Իտալիայի ֆուտբոլիստները: Այս խմբի մրցաշարը կանցկացվի 2012-ի մայիսի 25-28-ը, Իտալիայում:

2012-2013-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի որակավորման 1-ին փուլում մինչեւ 19 տարեկանների հավաքականն ընդգրկվել է 9-րդ խմբում, որտեղ մրցելու է Շոտլանդիայի, Շվեյցարիայի եւ Ռումինիայի ընտրանիների հետ: Այս խմբի մրցաշարը կանցկացվի Շոտլանդիայում 2012-ի հոկտեմբերի 9-14-ը:

Մինչեւ 17 տարեկանների հավաքականը հանդես կգա ընտրական 1-ին խմբում: Մրցակիցները կլինեն Բելառուսի, Սերբիայի եւ Մոլդովայի ֆուտբոլիստները: Խաղերը կկայանան 2012-ի սեպտեմբերի 25-30-ը Սերբիայում:

Նշենք, որ որակավորման փուլում յուրաքանչյուր խմբում 1-2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները, ինչպես նաեւ 3-րդ տեղը զբաղեցրածների մեջ լավագույն արդյունքի հասած 2 ընտրանիները կշարունակեն պայքարը:

Համաշխարհային նոր ռեկորդ

Գերմանացի ՖԻԴԵ-ի վարպետ Մարկ Լանգը «կույր» շախմատի խաղի համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Նա միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց 1700-1000 վարկանիշ ունեցող 46 շախմատիստների հետ: Այդ հանդիպումներում Լանգը տոնեց 25 հաղթանակ, 19 մրցախաղ ավարտեց ոչ-ոքի, կրեց 2 պարտություն: Խաղաշարը տեւեց 21 ժամ 9 րոպե:

Պաշտոնապես գրանցված աշխարհի ռեկորդը պատկանում էր հանրահայտ գրոսմայստեր Միգել Նայդորֆին, որը Սան Պաուլուում 1947-ին միաժամանակյա խաղի սեանս էր տվել 45 խաղատախտակների վրա: Նայդորֆը 39 հաղթանակ էր տոնել, 4 պարտիա ավարտել էր ոչ-ոքի, կրել էր 2 պարտություն: 1960-ին Յան Ֆլեշը Բուդապեշտում 52 մրցակիցների հետ էր մրցել (+39=3-18): Սակայն այդ ցուցանիշը պաշտոնապես չի գրանցվել որպես նոր ռեկորդ:

ՇԱԽՄԱՏ

Հրանտ Մելքումյանը նվաճեց գավաթը

Ստամբուլի շախմատի հայկական «Շիշլի» ակումբի նախաձեռնությամբ անցկացվեց Թուրքիայի շախմատի ֆեդերացիայի նախկին նախագահ, միջազգային կարգի մրցավար Ժիրայր Օհանյանի հիշատակին նվիրված արագ շախմատի մրցաշար: Մրցանակային հիմնադրամը 5300 դոլար էր:

Հայաստանն այս մրցաշարին ներկայացրին Հրանտ Մելքումյանն ու Լիլիթ Մկրտչյանը: Հրանտ Մելքումյանը 8,5 միավորով գրավեց 1-ին տեղը եւ արժանացավ Ժիրայր Օհանյանի անվան գավաթին: Լիլիթը 4 միավորով զբաղեցրեց 5-րդ տեղը: Բացի հայ շախմատիստներից մրցաշարին մասնակցեցին նաեւ բելառուս Սերգեյ Ժիգալկոն, ադրբեջանցի Վասիֆ Դուրարբեյլին, Թուրքիայի ներկայացուցիչներ Էմրե Կանն ու Մերտ Էրդողլուն:

Սիրանուշ Անդրեասյանը 3-րդն էր

Շախմատի Հայաստանի կրկնակի չեմպիոնուհի Սիրանուշ Անդրեասյանը հաջող հանդես եկավ Խարկովի նահանգապետի գավաթի խաղարկության կանանց մրցաշարում: 9 հնարավորից վաստակելով 6,5 միավոր, Անդրեասյանը գրավեց 3-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց ուկրաինացի միջազգային վարպետ Իրինա Անդրենկոն: 2-րդ տեղը գրավեց Սանկտ Պետերբուրգում բնակվող Ալինա Բալայանը, որը վաստակեց 7 միավոր:

Շրջանաձեւ մրցակարգով անցկացված մրցաշարում Սիրանուշ Անդրեասյանը հաղթեց Վերա Տառլեւային, Մարիա Կալինինային, Գալյա Լոմակինային, Ինա Ռոմանովային եւ Գալինա Շաղովալին, հաշտություն կնքեց Օլգա Շարովկայի, Իրինա Անդրենկոյի եւ Մայա Բեզկորովայնայի հետ: Միակ պարտությունը Սիրանուշը կրեց 8-րդ տուրում Ալինա Բալայանից:

Տղամարդկանց մրցաշարին մասնակցած Վարդգես Թովմասյանը 3,5 միավորով 10 մասնակիցների մեջ գրավեց 9-րդ տեղը: 6 միավորով հաղթող ճանաչվեց ուկրաինացի Միխայիլ Բոդոկին:

Նարդիստները որոշեցին ուժեղագույններին

Նարդու Հայաստանի ազգային ֆեդերացիայի հիմնադրման 20-ամյակին էր նվիրված կարճ եւ երկար մրցաձեւերից հանրապետության առաջնությունը: Անցած 20 տարիներին հայ նարդիստները զգալի հաջողություններ են հասել միջազգային տարբեր մրցաշարերում՝ տուն վերադառնալով մրցանակներով:

Կարճ մրցաձեւում չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին 2 խմբում: Վարպետների մրցավեճում բոլորից հաջող հանդես եկավ ու չեմպիոն հռչակվեց Սմբատ Պողոսյանը: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Հարություն Մարտիրոսյանն ու Էդիկ Դարբինյանը: Սիրողների մրցաշարում լավագույնը Նշան Թորոսյանն էր: Մրցանակային եռյակում տեղ զբաղեցրին նաեւ Գուրգեն Մխիթարյանն ու Գագիկ Բախալբաշյանը:

Զույգերով մրցախաղում չեմպիոնի տիտղոսին արժանացան Գուրգեն Մխիթարյանն ու Գեւորգ Նիկողոսյանը: 2-րդ տեղը գրավեցին հայր եւ որդի Աշոտ եւ Լեւոն Վարդապետյանները: Թիմային պայքարում ուժեղագույնը «Երեւանն» էր, որի կազմում հաղթանակում իրենց ներդրումն ունեցան Արթուր Մուրադյանը, Լեւոն Պետրոսյանը եւ Ավետիս Ռոստոմյանը:

Երկար մրցաձեւում ուժեղագույնը ճանաչվեց շախմատային մրցավար, նարդու ֆեդերացիայի պատվավոր անդամ Աշոտ Վարդապետյանը: 2-րդը Խաչիկ Մելիքյանն էր, 3-րդ տեղը գրավեց Սամվել Ռոստոմյանը:

«Միկայում» կրկին մարզչական փոփոխություն կատարվեց

Հաջորդ մրցաշրջանում «Միկան» նոր գլխավոր մարզիչ կունենա, որի անունը հայտնի կդառնա հունվարին, երբ թիմը սկսի նախապատրաստությունը 2012-ի առաջնության եւ գավաթի հանդիպումներին: Իսկ սլովակ մասնագետ Յոզեֆ Բուբենկոն վերադարձել է հայրենիք: Նրա հետ պայմանագիրը չի երկարաձգվել:

Արդեն կարծես ավանդույթ են դարձել «Միկայում» մարզչական հաճախակի փոփոխությունները: Վերջին տարիներին թիմում մշտապես առաջնության ընթացքում փոփոխվել են մարզիչները, սակայն ընդհանուր հաշվով դա «Միկայի» հաջող մրցելույթներին չի նպաստել: 2000-ից բարձրագույն խմբի առաջնություններին մասնակցող «Միկայում» արդեն 18 անգամ մարզչական փոփոխություն է տեղի ունեցել:

Ավարտված առաջնությունում «Միկան» հանդես եկավ 3 գլխավոր մարզիչների գլխավորությամբ: Մրցաշրջանը «Միկան» սկսեց Արմեն Շահգելդյանի ղեկ, որը նախորդ տարվա կեսերից էր ստանձնել թիմի ղեկը: Երիտասարդ մարզիչն իրեն վատ չդրսեւորեց: Նրա գլխավորությամբ «Միկան» հաջող հանդես եկավ ՀՀ գավաթի մրցաշարում եւ 6-րդ անգամ նվաճեց պատվավոր մրցանակը՝ եզրափակիչում 4-1 հաշվով ջախջախելով «Շիրակին»: Առաջնությունում էլ թիմը վատ չէր խաղում: Սակայն հետեւեցին 2 անընդմեջ պարտությունները եւ ակումբի ղեկավարությունը պաշտոնանկ արեց Շահգելդյանին: Թիմը մարզելու հրավիրվեց փորձառու մասնագետ Էդուարդ Մարգարովը, որի գլխավորությամբ «Միկան» 2000-2001-ին երկու անգամ գավաթակիր էր դարձել: Սակայն նրա օրոք «Միկան» ընդամենը 2 խաղ անցկացրեց, իսկ 3-րդ շրջանից թիմի ղեկը ստանձնեց Յոզեֆ Բուբենկոն:

Առայժմ դժվար է ասել, թե ով կփոխարինի Բուբենկոյին: Ըստ որոշ աղբյուրների, չի բացառվում, որ կրկին թիմ վերադառնա Արմեն Ադամյանը, որը ներկայումս մարզում է Ուլյանովսկի «Վոլգան»: Այդ թիմի հետ նրա պայմանագրի ժամկետը լրանում է 6 ամսից:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Երիտասարդների 22 տոկոսը հնարավոր է համարում, իսկ 15.2 տոկոսը ցանկանում է ընդմիշտ հեռանալ Հայաստանից

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ, սոցիոլոգ **Գեւորգ Պողոսյանը** 15-25 տարեկան երիտասարդների շրջանում սոցիոլոգիական հարցում է անցկացրել՝ պարզելու, թե նրանք ինչպես են վերաբերվում ընտրություններին, կուսակցություններին եւ առհասարակ քաղաքականությանը: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ սոցիոլոգը շեշտում է, որ հարցվածների 67 տոկոսի համար կյանքի ամենակարեւոր արժեքն ընտանիքն է: 18.3 տոկոսի համար առաջնայինն աշխատանքն է, 9 տոկոսը նախապատվությունը տալիս է ընկերներին: Ըստ հարցման, իգական սեռի ներկայացուցիչներն ավելի բարձր են դասել ընտանիքի արժեքը, քան արական սեռի ներկայացուցիչները: Գեւորգ Պողոսյանը դրական է համարում, որ այսօրվա երիտասարդությունը կրոնի նկատմամբ ունի ընդգծված, որոշակի եւ պարզ դիրքորոշում:

Հարցվածների 90 տոկոսը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է: «Սովետական շրջանի երիտասարդությունը նման հսկայական դիրքորոշում չուներ», եզրակացրեց Պողոսյանը:

Շարունակելով ընտանիք կազմելու թեման՝ Պողոսյանը նշում է, որ հարցվածների 21 տոկոսն ընտանիք ունի, 22 տոկոսը չի մտածում ընտանիք կազմելու մասին, իսկ 25.9 տոկոսն ընդհանրապես մտադիր չէ ընտանիք կազմել: Հարցվածների 50 տոկոսը ցանկանում է 2 երեխա ունենալ, 27,6 տոկոսը՝ 3: «Երիտասարդների կեսը մտադիր է ընտանիք կազմել, սակայն նրանց երկու երրորդն է ցանկանում է 2 կամ 3 երեխա ունենալ: Ստացվում է, որ մեր երկրի բնակչության նույնիսկ պարզ վերարտադրությունն է վտանգված, իսկ դա նշանակում է, որ ապագայում հնարավոր է բնակչության թվի նվազում»: Սոցիոլոգը նշում է, որ եթե գումարենք նաեւ արտագաղթի գործոնը, ապա ակնհայտ կդառնա, որ երկրի դեմոգրաֆիկ աճը վտանգված է: Հարցվածների 62 տոկոսն իր ապագան կապել է Հայաստանի հետ, 22 տոկոսը Հայաստանից հեռանալը համարել է հնարավոր տարբերակ, իսկ 15.2 տոկոսը ցանկացել է ընդմիշտ հեռանալ երկրից: Նման պատկերը պայմանավորված է աշխատանքի, ուսման, վատ տնտեսական պայմաններով: Հարցման արդյունքներով իգական սեռի ներկայացուցիչներն առավել հայրենասեր են, քան արական: Աղջիկների մեծ մաս չի ցանկացել լքել երկիրը: Հարցման ընթացքում սոցիոլոգներն անդրադարձել են նաեւ աշխատանքին եւ աշխատավարձի չափերին: Երիտասարդների 40 տոկոսը ցանկանում է, որ ամսական աշխատավարձը կազմի 200.000 դրամ, 20 տոկոսը՝ 300.000 դրամ, իսկ 10 տոկոսը՝ 500.000 դրամ: Ըստ Պողոսյանի, այս առումով երիտասարդների սպասելիքները բարձր են, քանի որ այսօր ոչ մի երիտասարդ մասնագետ այդքան գումար չի ստանում: Ըստ սոցիոլոգի՝ առաջիկա ընտրությունների վերաբերյալ երիտասարդների մոտեցումը էապես տարբերվում է միջին եւ ավագ տարիքի մարդկանցից: Երիտասարդների 34 տոկոսը որեւէ կուսակցության իր ձայնը չի տա, 28.3 տոկոսը՝ կտա ՀՀԿ-ին, 18 տոկոսը՝ ԲՀԿ-ին, 6-ական տոկոսներ են հավաքել ՀՅԴ-ն եւ ՀԱԿ-ը:

Հ. Հ.

Որքան էլ ստուգում են, թոշակի ու նպաստի համակարգում էլի խախտումներ են լինում

1-ին էջից

Փաստորեն ավելի վաղ կենսաթոշակային համակարգի ստուգումներից եւ աղաղակող խախտումների հայտնաբերումից հետո ոլորտում խախտումները շարունակվում են, եւ ՎՊ-ում որոշել են հաջորդ տարի եւս շարունակել ստուգումները Հայաստանի սոցիալական ծառայությունների տարածքային մասնաճյուղերում՝ վերհանելու համար դրանց պատճառները եւ հասկանալու՝ ճի՞շտ են կազմում ցուցակները, ճի՞շտ են հաշվարկվում թոշակներն ու նպաստները, եւ ինչո՞ւ այսքան ստուգելուց հետո ոլորտում էլի բազմաթիվ են խախտումները. «Մենք առաջարկել ենք կառավարությանը որոշում ընդունել առ այն, որ նպաստների համակարգում հայտնաբերված խախտումները հետ վերադարձնեն պետական բյուջե տարածքային մարմինների աշխատակիցներն ու դրանց ղեկավարները, որ այլեւս որեւէ նպաստառուից գումար չգանձեն: Խնդիրը նաեւ ներկայացվել է հանրապետության նախագահին եւ նրա կողմից կա հսկայական դրական մոտեցում այդ հարցին: Եթե պետական չինովնիկը չի կարողանում օրենքի կեսը պահել, եթե օրենքի կեսը չի կարողանում հարգել, բնականաբար պետք է հսկայական պատասխանատվություն դրվի նրա վրա», խսացավ ՎՊ նախագահ Ի. Զաքարյանը:

Համայնքներից ստուգվել են Արարատի մարզի Մասիս, Արմաշ, Արգավանդ, Հովտաշատ, Սուրենավան, Ոսկետափ, Նոր Խարբերդ, Նորաշեն, Գեղափնյա համայնքները, որոնցում ցայտուն խախտում է եղել տարբեր բնույթի հարկերի չհավաքագրումը կամ թերի հավաքագրումը (գույքահարկ, հողի հարկ, այլ գումարների հավաքագրում)՝ մոտ 190 մլն դրամ չհավաքագրված գումարներ: Այս խախտումները համապատասխան վարչության եւ համայնքների ղեկավարների հետ քննարկվել են, պետք է ժամանակացույցով հավաքագրվեն համայնքների բյուջե եւ ծախսվեն համայնքի կարիքների համար:

Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանը չընդունեց «**Ազգի**» այն մտահոգությունը, թե գույքի հարկերի հավաքագրումը հողօգտագործողների անվճարունակության արդյունք է (նկատի ունեինք բերքի իրացման եւ այլ դժվարություններ). ոչ, հող ունեցողն, ըստ մարզպետի, պետք է հարկերը վճարի:

Սոցներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրից ընդհանուր վերահսկվող գումարը 1 մլրդ դրամ է, իսկիչ չափագրում իրականացվել է 510 մլն դրամի սահմաններում: Այս ծրագրով երկրի տարբեր մարզերում շուրջ 16 օբյեկտ է ստուգվել եւ արձանագրել 33 մլն դրամի խախտման դեպք, որից 9,6 մլն դրամը վերականգնվող գումար է, պետք է փոխանցվի պետական բյուջե, 23,9 մլն-ը աշխատանքով է վերականգնվելու: Ի. Զաքարյանը նշեց, թե սոցներդրումների հիմնադրամի ծրագրերով արդեն երկրորդ ստուգումն է իրականացվում, այդ առումով դրական միտում կա, բայց դեռ խախտումներ տեղի են ունենում:

«Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում 12 մլն դրամի եւ 4700 եվրոյի խախտման դեպք է արձանագրվել, որն ամբողջությամբ ենթակա է վերականգնման կամ պետբյուջե, կամ ընկերության հաշվին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՁՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

Հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը /քմ/	Շինության մակերեսը /քմ/	Մեկնարկային գինը /դրամ/
	Աճուրդով օտարվող գույքերի ցանկ				
1	Բաբայան 51	կաթսայատուն	151.8	131.7	4,000,000
2	Մաշտոցի պողոտա 37շ. 84 տարածք	ոչ բնակելի տարածք		27.7	5,325,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմաններին մանրամասնորեն, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ դեկտեմբերի 14-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 14-ը, ժամը 14.00-ը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մայրաքաղաքի երթուղային ցանցի ռազմավարությունը

Միկրոավտոբուսների թիվը կկրճատվի, ավտոբուսներինը՝ կավելանա

Մայրաքաղաքի երթուղային նոր ցանցի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խումբը, որի կազմում ընդգրկված են քաղաքապետի խորհրդականները, քաղաքապետարանի ենթակայության տրանսպորտային ընկերությունների եւ Երեւանի հասարակական տրանսպորտի կառավարման հանձնաժողովի անդամները, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին են ներկայացրել մայրաքաղաքի երթուղային նոր ցանցի հիմնական ուղղություններն ու ռազմավարությունը: Քաղաքապետի խորհրդական Արտաշես Առաքելյանի մեկնաբանությամբ՝ նոր ցանցը մշակվել է ներկայի հետ համեմատական վերլուծությունների հիման վրա: Հաշվի են առնվել միջազգային տարբեր կառույցների իրականացրած մոնիտորինգի արդյունքները: Նոր ցանցի հիմնական ռազմավարությունը մայրաքաղաքի կենտրոնական փողոցները բեռնաթափելն ու միկրոավտոբուսներից ավտոբուսներին աստիճանական անցում կատարելն է: Ըստ այդմ, եթե այսօր 30 երթուղիներում շահագործվում է 350 ավտոբուս, ապա նոր ցանցում ավտոբուսային երթուղիների թիվը նախատեսվում է ավելացնել 16-ով, իսկ ավտոբուսների թիվը՝ 300-ով: Նոր ցանցով նախատեսվում է կրճատել միկրոավտոբուսների թիվը՝ 109-ից հասցնելով 75-ի: Այդ կերպ 800 միավորով կնվազի միկրոավտոբուսների քանակը: Առաջարկվող նոր ցանցը նաեւ միտված է երթուղիների առավել արդյունավետ շահագործմանը:

Տարոն Մարգարյանը աշխատանքային խմբին հանձնարարել է երթուղային նոր ցանցում հատուկ ուշադրություն դարձնել հասարակական տրանսպորտի հատկապես առավոտյան եւ երեկոյան ժամերի աշխատանքին: Քաղաքապետը հասարակական տրանսպորտի աշխատանքը գնահատել է ոչ գոհացուցիչ: «Երեւանցիների դժգոհությունը հիմնականում առավոտյան 8 անց 30-ից մինչեւ 10-ի եւ երեկոյան 18-ից մինչեւ 21-ը ժամանակահատվածում իրականացվող տրանսպորտային փոխադրումներից է: Երթուղային ցանցն անհրաժեշտ է այնպես կառուցել, որ քաղաքացիները երթեւեկության ծանրաբեռնված ժամերին երթեւեկելու դժվարություններ չունենան», ընդգծել է քաղաքապետը:

Հ. Հ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամը եւ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝

գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ներկայացնում են 100 համերգից բաղկացած համերգաշարի անդրանիկ համերգը:

Համերգին նվիրված ասուլիսը կկայանա ս. թ. **նոյեմբերի 30-ին**, ժամը **12:00-ին, ՀՀ մշակույթի նախարարությունում**:

Ասուլիսին մասնակցում են՝

Լեւոն Սարգսյան /«Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ/

Հասմիկ Պողոսյան /ՀՀ մշակույթի նախարար/

Սերգեյ Սմբատյան /Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղ. ղեկ. եւ գլխ. դիրիժոր/

Տեղեկությունների համար զանգահարել 010 581171 098310360 համար ծառայություն:

ՀՀ, ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում 15.12.2011թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

1. Բնակելի տուն, որի մակերեսն է՝ 41.2 ք.մ, հողամաս՝ 0.096 հա, ծածկ՝ 71.7 ք.մ, ջերմոց՝ 656.2 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Ազատաշեն, 8-րդ փող., թիվ 4 բնակելի տուն: Լոտի մեկնարկային գինը՝ 19300000 ՀՀ դրամ:

2. Բնակելի տուն, որի մակերեսն է՝ 134.5 ք.մ, հողամաս՝ 0.058157 հա, պարիսպ՝ 1.2 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Նորք 11 փ., 24 բնակելի տուն: Լոտի մեկնարկային գինը՝ 24100000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պատշաճաստար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 1-ին լոտի համար՝ 210000 ՀՀ դրամ, 2-րդ լոտի համար՝ 500000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 13.12.2011թ. ժ. 16:00-ն, ինչի կատարմամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, այսուհետեւ հոլանդական՝ մեկնարկային գնի նվազեցմամբ: Լոտերը սակարկվելու են ըստ ներկայացված հերթականության: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը, ինչպես նաեւ հատուցել աճուրդին մասնակցելու հետեւանքով նրա կրած վնասները: Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 09.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 15:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: